№ 10 (101) IX ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1899

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak,,
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍԸ

ՍԵՐՈԲ-ԱՂԲԻՒՐ

Gloria victis!

Տարօնի առիւծը նահատակուեր է։

Զինք կրնար չողոտել իր անապատեցի մահը եւ չհիանալ միանգամայն ժողովրդի այդ սրատոտ, անմեղուն եւ հարազատ զաւակին վրայ։

Անոնցմէ էր Սերոբ, որոնց մարերը բացառիկ տատզերու տակ կը ծնին, եւ որոնց հոգուն մէջ անցեալէն մաւցած դիւցազնական վեհութիւն ու չնորհք ը կան։

Գրեթէ եօթ տարի—արկածալից եւ փոթորկալից տարիներ—դիմագրաւ եւ անսասան ապրեցաւ մը եղաւ օսմանեան աշխարհաւեր եւ թաթարական վարչութեան դէմ։ Ամի մը ընկերներով ոչ միայն ահռչակաւոր ազգեց իր բաւարար թշնամիին, այլեւ պատկառանք Ամբողջ վարչութեան դէմ։ ինքը լեռ մըն էր. Սիսանայ սարին պէս։

Սերոբ-Աղբիւր իր մարմնի կենսառոյգ՝ այլ տարաբախտ հողին վրայ ուռճացած, անոր հաղուած եւ վրէժխնդիր արձագանգներով կրուելած ու դաստիարակուած, հայրենի ճշմարիտ հերոս մրն էր. պատմաւանդական քաջերու սրատարդող տաքարին հմայքը ու կորիճ ափիւնովը հմայացած։ Պարզ էր իրդելը, իրենց լեռներու սոսինքներէն վազած աղբիւրներուն պէս զուլալ եւ առողջ, կուռ ու վեհուժ։ Իր գործին մեծութեան ու նուիրականութեան վրայ մարտիրոսի հզօր ու ապառաժէ հաւատքը ունէր որ կուտար իրեն այն գերմարդկային արիութիւնը եւ քաջագործութիւնը որ բացառիկ էակներու մենաշնորհն է։

Այն գժնդակ ու անողոք հանգամանքներուն մէջ, որոնցով շրջապատուած էր անմոռանալի հերոսը, եւ որոնց դէմ արեկ հասակովը կը մրցամարտէր իր Սօսին հետ, այնքան ինքնավստահ շարժումով մը եւ ռազմութիւնով մը, ոչ մէկ հաստակ մահկանացու չէր կարող երկար ապրիլ։ Դեռ մըն էր, երբ չանթանաղող քանդչութիւնով քրդական լէշկէրներու ու կամոնաւոր զօրքերու դէմ կռուիլ հարկ ըլլար։ Անպարտելի մնաց մինչեւ վերջի շունչը, մինչեւ որ սեւհոգի դաւաճանութիւնը զայն թակարդը ձգեց։

Իր թշնամիները „Սերոբ փաշա" կը կանչէին անոր։ անկեղծ էր այդ գովասանքը. բայց հայ ժողովուրդը աւելի համեստ, աւելի սրտաբուխ, սիրուն եւ խորհրդանշող անուն մը տուած է „ժողովրդական հերոս"ը կոչելով զայն, — հին աշուղի մը բանիրեն արժանի — իրր մնայուն մարմնացումը ազգային շղթայակիր զգացումին եւ սրբազան ուխտին։

Ցեղին ուժեղ-պատերազմիկ, սարիկ ու զոզ եւ լոյս ապագայեղ ոգին էր Սերոբը. զինքը ծնող հողէն անբաժան, լոչտակի մը պէս խրած էր անոր մէջ, զոր կարելի յանգնողը պէտք էր մահը աչքը առնէր։

Մեր մէջ սրտեր շատ կան, որոնց խրատքանչիւրին մէջ մէյմէկ առիւծ է քնած. ո՞վ պիտի գայ իր մէջ, խորտնկ ցնցումը, ներշնչումը, հիանալի հերոսին տեղը բռնելու եւ անոր ձեռնարկած վեհ ու ազնիւ գործը, նոյն ջերմեռանդութեամբ եւ նոյն հայրենասիրական աճուն հաւատքով մը առաջ վարելու համար։ Կ'արժէ, որ խիզախ եւ անվեհեր հոգիները, այդ հեղակայ կերպարանքին առջեւ, հպարտ եւ փղձկուն խայանքով մը, ինչպէս Կ'սար Աղեքսանդրի արձանին առջեւ, աղաղակեն։ „ես կ'ուզէի Սերոբ մը ըլլալ"։

Զինուոր հերոս-գործիչի մահով կրեթէ ամբողջ ազգական ընտանիք մը կ'անհետանայ. իրեն հետ կը մեռնին իր 12 տարեկան կորիւնը, իր երկու եղբայրները, — դժբախտ ու սեւ ճակատագրին զոհ սրտաչարժ եւ դիւցազնական groupe մը — իսկ Սօսին, որ կենսական ուժն ու զօրավիշն էր իր ամուսնուն եւ անոր բարեկամութեանը յաճախ կը հրամանատարէր քաջամարտիկ խմբին, վիրաւոր գերի ինկած է։ Այժմ բանտին մէջ, հայ Ամազօնը կուլայ, իր առիւծն ու կորիւնը. . . Աղգային սրատարդունքով շրջապատենք զայն։

Սերոբը, այդ դիւցազն, հաստակրելի տիպարը, մեր ազգային գոյութեան կռի ու փառքի էջերուն էն հարազատ, էն սրտի մօտիկ մեծագոյն դէմքերէն եւ պարծանքներէն մէկը պիտի մնայ։ Իր մահը սակայն ծաղիկ մը մահն է, բեղուն ապագայով։

Ճակատագրի փորձանքներուն առջեւ խրոխտ մնալ եւ վեր արկիլ անհրաժեշտ է ազգի մը համար, եթէ չուզեր իր ասպը կորսնցնել։ Դժբախտութիւններու առջեւ է որ ազգերու թերութիւնները ու մեծութիւնները կը ճանչցուին։ Դէն շպրտելով մեր յոռետես, ակնապիկ եւ բացասական ուժգոյն կողմերը, գօսեսնդելիք առնական եւ կորովալիր զգացումներու համերգութիւնով մը։

Սերոբը, աղբիւր-իկէալը թող ըլլայ, սարկութեան մէջ լացած ու դիւցազնացած, եւ ազատութեան հաւատարիմ ծարաւի ժողովրդի երազուն հոգին. իսկ Սօսին, Տարօնի հերոսուհին, „ոսկիամայր" տիպար կինը բոլոր այն լաւկան, սրտակիցի եւ արիասիրտ մայրերուն ու հայուհիներուն, որոնք իրենց ծոցին վրայ կ'ապրեցնեն ցեղին կեանքը եւ իրենց սրտատրոփ կուրծքին տակ, ինչպէս տաճարի մէջ, սրբազան նախանձայուզութիւնով մը կը պահպանեն ցեղին դարաւոր ձայնը, ազատութեան հառաչանքը, կայծուկրակը. . .

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԿՐԱԿԸ

I

Պատմութեամբ մանուկ, թւով 80 հազար, թշնամի Մարսին, զուրկ „կրծքազարդ“ զօրապետներից, առանց զինուորական „ուսման“, ձեռքին մի հրացան միայն՝ նրանք հրաշքներ են գործում, հրաշքներ ուժի, հաւաստութեան, մեծութեան, հրաշքներ համաշխարհային փառքի, միլիոնների դէմ։

Բոէրներն են այդ հրաշագործները։

„Մեր կռիւը չի ունենայ իր նմանը պատմութեան մէջ. և այն, ինչ որ մենք կ՚անենք, կը զարմացնի ողջ աշխարհը“,—այդ համարձակ, վստահ խօսքերով էր, որ ամբողջ մարդկութեան առաջ դուրս եկաւ ամենամեծ բոէրը, նախագահ Կրիւգեր, երբ դեռ չէր հնչել թնդանօթի որոտը։ Ալբիօնը ժպտաց Աֆրիկայի ծերունի ժողովրդապետի այդ պատգամի վրայ և իր այդ ժպիտը հաղորդեց ամբողջ աշխարհին։

Սակայն երկու ամիս դեռ չի անցել և այդ ժպիտը արդէն տեղի է տուել դառն արտասուքի Մեծ-Բրիտանիայի սահմաններում և կատարեալ ապշութեան՝ այդ սահմաններից դուրս...

Դարավերջի հերոսը՝ բոէրն է։

— „Տուգելայի ճակատամարտից յետոյ, — ասում է անգլիացի մի օֆիցեր, — երբ անցնում էի բլուրի վրայով, իմ առաջ գտայ մի վիրաւոր, կրթնած ժայռին, տագնապի վերջին րոպէներում։ Մօտեցայ։ Մի ձեռքով բռնած իր սոսկալի վէրքը, միւսում սեղմած հրացան՝ ալեզարդ ծերունին, մարող աչքերով մի ինչ որ բան էր փնտրում։ „Վերջին անգամ, խնդրում եմ, վերջին անգամ բերէք, որ գրկեմ որդուս. ես մեռնում եմ“։ Շուռ եկայ և մի քիչ հեռու գտայ մի պատանի, հազիւ 14 տարեկան, նոյնպէս հրացանը ձեռքին, ուժասպառ, մահամերձ։ Արտասուքը աչքերիս, շտապ դրկեցի պատանուն և բերեցի հօր մօտ։ Աղէկտուր էր տեսարանը և ես դարձրի երեսս, որ չտեսնեմ։ Մի քանի րոպէից, երբ նորից դարձայ դէպի նրանց, որդին արդէն անշնչացած էր՝ նոյնպէս արդէն դիակնացած հօր գրկում“։

Ու եթէ դուք, հիասթափւած հայ ընթերցող, կարծում էք, որ այն երկիրը, ուր 60 տարեկան հօր հետ միասին ազատութեան համար զոհւում է և 14 տարեկան որդին, կը ստրկանայ և իր շլինքին կ՚անի գերութեան անարգ շղթան,—սխալւում էք։ Սխալւում էք այնպէս, ինչպէս սխալւեցին լորդ Չեմբըրլէն և շատ լորդեր, որոնք հաւատացրին բարեմիտ Վիկտորիա թագուհուն, թէ ծննդեան տօները դեռ չհասած՝ Պրետորիայում կը ծածանի անգլիական դրօշակը։ Այդ դրօշակի տեղ Տրանսվալի մայրաքաղաքում 5.000 անգլիացի գերիների գլխին ծածանում է այն ժողովրդի դրօշակը, որ կոչւած է վայրենի Աֆրիկայում պատուաստելու մարդկային մտքի ամենամեծ հանգանակը՝ մահ կամ ազատութիւն...

II

Այդ ազատութիւնը ժամանակակից բոէրը միայն գրքերի մէջ չսիրեց։ Դեռ 40 տարի առաջ, նրա պապերը վառւած էին այդ կրակով. և երբ առաջին անգամ անգլիական „քաղաքակրթող“ զօրքը ոտք դրեց նոր բնակավայրի շեմքի վրայ՝ բոէրները աւելի լաւ համարեցին նոր հայրենիք փնտրել, քան ստրկանալ։ Բոէրական նոր սերունդը ազատութեան մէջ իր նախորդներից շատ առաջ անցաւ։ Նա իր բոյնը սիրեց ինչպէս առիւծ։ Վայրենի Աֆրիկայի անմշակ ձորերում նա մի երջանկութիւն միայն ունի — ազատութիւն, և այդ միակ երջանկութեան համար է, որ այսօր երգով ու ծափով անգլիական հզօր բանակի դէմ է դուրս գալիս բոէրը, բոէր-երիտասարդը, բոէր-ծերունին, բոէր-կինը, բոէր-պատանին, որի հզօր բազկից երբեք չի վրիպում գնդակը և որ գիտի մեռնել նոյն հպարտութեամբ, ինչ հպարտութեամբ սիրում է կռւել...

Տեղը, ժամանակը փոխւեց, բայց գաղափարը մնաց նոյնը։ Դարեր առաջ այդ գաղափարը, իբրև ազատութեան կրակ, վառեց մի բուռն ժողովուրդ Եւրոպայի հարաւում, որը պարսկական բռնապետութիւնը ջարդելու համար ստեղծեց հելլէնական ամենամեծ պարծանքը՝ Թերմոպիլը։

Նոյն կրակն էր, որ մեր դարում, սուլթանական ռեժիմը խորտակելու համար, առաջ բերեց Միսսոլօնգիի և Բիօսի-ծոցի հերոսութիւնները յունական Արշիպելագում և հերոսութիւնների մի այլ շարք Բալկանի վրայ։ Ազատութեան այդ կրակն էր, որ վառեց կուբացիներին՝ սպանիական դարաւոր բռնութեան դէմ, որ ստեղծեց արիւնոտ, բայց խնկելի էջեր փոքրիկ ազգերի՝ լեհերի, իրլանդացիների և վերջին տարիներս էլ Թիւրքաց հայերի պատմութեան մէջ։

Այժմ այդ կրակը հրաշքներ է գործում „վայրենի“ երկիրների մէջ, ուր Ֆիլիպպեան կղզիների յամառ դիմադրութեան այսօր յաջորդում են բոէրների քաջագործութիւնները Հարաւային-Աֆրիկայում, որոնք ազատութեան պատմութեան մէջ արդէն մտցրին նորագոյն Թերմոպիլը՝ Մօդդերրիվէրի ճակատամարտը։

Ու եթէ 20-րդ դարում վայրենի Աֆրիկային վիճակւած ունէ դեր կատարել պատմութեան մէջ, դրա առաջին պատիւը պատկանում է այն փոքրիկ, թւով նւաղ, բայց ազատութեան կրակով բորբոքւած և անվեհեր ազգին, որ երէկ անուն չ՚ունէր, բայց այսօր պարծանք է դարձրել իր անունը...

III

Այդ կրակն է ահա, որ պակասում է Փոքր Ասիայի մէջ՝ նոյնպէս անկախութեան համար կռւող մի ուրիշ ազգի՝ հային։ Եթէ 80 հազար բոէրները տւեցին 20 հազար կռւողներ, 3 միլիոն հայերը, բնական է, աւելի կարող էին տալ։ Ու եթէ այդ 20 հազար կռւողները „խենթութիւն“ չսեպեցին գլուխ բարձրացնել ամենաուժեղ Բրիտանիայի դէմ, որ իր ձեռքի տակ 400 միլիոն ժողովուրդ ունի, ամենևին „խենթութիւն“ չպիտի համարւի հայկական ապստամբութիւնը Թիւրքիայի նման պետութեան դէմ, որ 19-րդ դարի սկզբից արդէն քայլառքայլ դիմում է դէպի անկման և վերջնական կործանման անդունդը։

Հայութիւնը ունի անցեալ, որ ոգևորէց ժամանակակից սերունդը. բոէրը այդ չունի։ Հայութիւնը ունի մի հայրենիք, որի հետ նա կապւած է ոչ միայն օջախով, այլ դարերի մի ահագին շղթայով. բոէրը այդ էլ չ՚ունի։ Հայութիւնը, վերջապէս, իբր կռւի

խթան, իր գէմ ունի մի այնպիսի թշնամի, ինչպէս է Թիւրքիան, որին կործանելը պատմական պարծանք պիտի լինի ամէն մի կուլտուրական ժողովրդի համար. բօէրը այդ էլ չ'ունի։

Բայց այն, ինչ ունի Հարաւային Աֆրիկայի „հերոսը" և որից, ինչպէս մի կախարդական աղբիւրից, դուրս է ցայտում ոյժ նրա բազկի և ոգևորութիւն նրա սրտի համար, — այդ պակասում է հայութեան։

Ազատութեան կրակն է այդ։

Այդ կրակը կայծեց մի Սասուն, մի Զէյթուն. նա բորբոքեց ազատութեան ոգին հայութեան մասնակի շրջաններում. այդ շրջաններից դուրս եկան, ճշմարիտ է, անձնուէր կուռողներ, որոնք եթէ չյաղթեցին, բայց գոնէ քաջաբար նահատակուեցին.—սակայն նա չվառեց ամբողջ ազգը, չդարձրեց հայութեան բոլոր մասերում այն բարձր զգացմունքները, առանց որոնց ոչ մի մարդ և ոչ մի ժողովուրդ ընդունակ չէ հերոս լինելու։

Երբ որոտաց առաջին թնդանօթը Տրանսվալի սահմաններում և առաջին բօէրի արիւնը թափուեց, այդ արիւնը դարձաւ վրէժի մոգական հրաւէր բոլորի համար, և մենք տեսանք, թէ ինչպէս աշխարհի բոլոր կողմերից բօէրները շտապեցին դէպի իրենց հայրենիքը, մասնակից լինելու ընդհանուր գործին։ Ղաճառականը թողեց իր առևտուրը, ուսանողը՝ իր ուսումը, հարուստը՝ իր զարգացումները. ամէնքն էլ վերադարձան, ամէնքն էլ մտան կռուի դաշտը։ Անմաս չմնաց և բօէրկինը, որ նոյնպէս զէնք վերցրեց։—Բայց սրանից մի քանի տարի առաջ, 1890-1897 թուականներին, երբ հայկական յուսատու շարժումների հետ միասին՝ ամբողջ Հայաստանը դարձել էր պատմութեան մէջ չտեսնուած արիւնոտ դրամայի մի դժբախտ բեմ, — հայ երիտասարդը հանգիստ խղճով հիւսիս և Եւրոպա էր գնում ուսանելու. հայ հարուստը աւելի պինդ էր փակում իր՝ առանց այն էլ անմատչելի՝ տան դռները. հայ գրողը շարունակում էր աւելի ոգևորուած երգել „վարդն ու սոխակը" կամ „գեղատեսիլ կուսին մազերը". հայ կղերը իր սովորական եռանդով աղօթքներ էր կարդում սուլթանի համար, — մոռանալով, որ անկախութեան հարցը մասնակի խմբերի հարց չէ, այլ ամբողջ ազգի հարց, որը լուծելու համար անհրաժեշտ է ազգի բոլոր մասերի և բոլոր խաւերի միակամ, շաղկապուած մասնակցութիւնը...

Դժբախտ է ժամանակակից հայ սերունդը, դժբախտ ոչ թէ քաղաքական ձախորդութեամբ, այլ նրանով, որ ազատութեան կրակը չվառեց, չբորբոքեց, նրա բոլոր մասերը, չդարձրեց նրան ինչպէս մի ամբողջութիւն, նոյնիսկ այն ժամանակ, երբ թշնամին խլեց նրանից 300 հազար որդիք, այն ժամանակ, երբ նա կանգնած էր իր գոյութեան ամենամեծ խորհրդի, — իր ազատութեան առաջ։

IV

Ժամանակակից բօէրի պարծանքը միայն նրա յաղթութեան մէջը չէ։ Եթէ նա մինչև իսկ յաղթուի, կը յաղթուի նոյնպէս պարծանքով։ „Թշնամին կը գտնի մեր հայրենիքի մէջ ոչ թէ ստրուկներ, այլ ազատների կոյտեր"։ Այդ է բօէրականութեան վճիռը։

Այդ պիտի լինի և հայութեան տեսակէտը։ Եթէ ժամանակակից հայութեան վիճակուած չէ իր ապագայ սերունդին ժառանգութիւն թողնել մի ազատ-հայրենիք, նա պարտաւոր է գոնէ մարդկային պատմութեանը ժառանգութիւն թողնել մի անմահ, ստրուկ ազգերին ոգևորող անուն, — ազատութեան նահատակի անունը։ Բաւ է, որքան հայը ստրուկ ապրեց։ Եթէ հային վիճակուած է մռնել, նա պէտք է մռնի իրրև կռուող և ոչ իրրև մորթուող, իրր ազատութեան զինուոր և ոչ իբր ստրկութեան զոհ։

Այդ է բօէրի նշանաբանը։

Այդ թող լինի և հայի նշանաբանը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԵՐՈԲԻ ՄԱՀԸ

(ՆԱՄԱԿ ՄՈՒՇԷՆ)

—

Հատոնց է, բայց վերջերս մանաւանդ, կառավարութիւնը վճռած էր ամէն կերպով մէջտեղէն վերցնել Սերոբը, որուն գոյութեան մէջ վտանգ կը նշմարէր։ Կառավարական բոլոր էնտրիկները, բռնի միջոցները, զուր անցած էին, մինչև որ ազգային սեսիրտ դաւաճանութիւնը մէջտեղ եկաւ և ծուղակի մէջ ձգեց լեռան առիւծը՝ որուն մանչիւնը հերիք էր իկիտ զօրավարներու ու վաշտերու սիրտը դող հանելու համար։

Կառավարութիւնը լրտեսներու մասնաւոր խումբ մը կազմակերպած էր որոնք ամէն տեղ Սերոբին հետքին վրայ էին. այդ տխուր գործին մէջ օժանդակեցին անորակելի հայեր, որոնց ցածութիւնը, ոճիրը աններելի պիտի մնան. ատոնք նոյնիսկ կառավարութեան խօսք տուած էին սպաննել տալ Սերոբը։ Ընկերներու կողմէն հարկ եղած զգուշութիւնները տրուած էին. բայց, դժբախտ հերոսը, երկու ամիսէ իվեր ունեցած անձնական տկարութեան պատճառով անհնարին եղած էր հեռանալ, թէև քիչ շատ զգուշութիւններ ձեռք առած էր։ Փոթորիկը սուսիկ փուսիկ կը պատրաստուի եղեր սակայն։ Բաղէշի Ալայ պէկը — Գուրգէնի նահատակութեան հեղինակը նմանապէս — դէպքէն քսան օր առաջ Մշոյ դաշտը հարստահարական այցելութիւն մը տալով վերադարձաւ Բաղէշ։ Վտանգը կը կարծուէր թէ անցած է։ Ամսուն 25-ին նոյն պէյը յանկարծ 500 զօրք առած հետը, սուտ լուր կը հանէ թէ Մօթկնայ քիւրդ ցեղապետներուն վրայ կերթայ զանոնք պատժելու համար, այդ առթիւ Պալաքցի, Խեանցի և այլն. քիւրդ ֆշիրէթներէն ալ 1500 հոգի կառնէ և խաբ տալով, Խոյթ գաւառակէն կ'անցնի և գիշերով անակնկալ կերպով կուգայ կը պաշարէ Կէլիէ Կուզան գեղը, ուր կը գտնուէր Սերոբ իր կնոջ և 12 ընկերներով։ Բացի քանի մը մատնիչներէ ժողովուրդը ոչինչ գիտէր այդ մասին, այնքան ջանացած էին երևոյթները խարուսիկ ընել։

Գեղացիները առտուն կանուխ երբ կը տեսնեն որ պաշարուած են, անպատրաստ ըլլալով ցիրուցան կը փախին։ Սերոբ և իր ընկերները կը մնան իրենք իրենց։ Փախստի ոչ մի հնար չկայ. կատաղի կռիւը անխուսափելի է։ Տասերկու հոգի 2000-ի դէմ, կատակ չէ։ Երբ թշնամին բաւական կը մօտիկնայ, մերոնք դուրս սլանալով ապաստանած տնէն՝ զիրենք շրջապատող

կրակին դէմ երեք խումբի կը բաժնուին և հրացանաձգութիւնը կարկուտի պէս կըսկսի երկու կողմէն։ Ափսո՜ս, բանը բանէն անցած էր. Թշնամին արդէն գիշերով ամուր ու անառիկ տեղերը գրաւած, մերիններուն ուրիշ բան չի մնար բայց եթէ հերոսութիւնը մինչև յուսահատութեան մղել։ Չնայելով որ Աղբիւրը երկու ամսէ ի վեր տկար էր, նորէն իր անզուգական և պաշտելի կնոջ Սօսիի աջակցութեամբ 8 ժամ անընդհատ կը կռուի։ Աննման Աղբիւրը անշնչացած կ'իյնայ, իր կինը կը խլէ անոր հրացանը և երկու ժամու դիւցազներգութեան արժանի քաջութիւնով մը կը սասանեցնէ թշնամին յանդգնութիւնը։ Հայ կինը այդ րոպէին կ'անմահանար Սօսիի անձին վրայ։ Թշնամին շնորհիւ իր բռնած դիրքին յաղթանակը կը տանի։

Կը նահատակուին Աղբիւրը իր մէկ հատիկ 12 տարեկան տղան, երկու եղբայրները և գեղին տէր Բաջ քահանան։ Իսկ հիանալի Սօսին, ծանրապէս վիրաւորուած գերի կ'իյնայ։ Ինը հոգի նահատակ կ'իյնան մնացած չորս ընկերները, կը յաջողին փախչիլ, որոնք ազատ են այժմ։ Թշնամին կորուստը յայտնի չէ. գիշերով մարբեր տարեր են. ոմանց ըսելով քսանէն աւելի է, ինչ որ Սերոբի պէս հերոսի մը համար, աննշան և չիք վարձատրութիւն մըն է. ինչարկէ այդ թիւը աւելի պատկառելի կըլլար, կռիւը աւելի քաջալերական, եթէ Տարօնի առիւծը կանխաւ պզտիկ իմաց մը ունենար և վանդակի մէջ փակուած չմնար։

Կռիւէն ետքը, աւազակ Ալի պէյի վոհմակը բարի նախանձով մը ամբողջ Կէլիէկուզանը, 150 տունէ աւելի, աւարի կուտայ։

Կանոնաւոր զօրքը և ասպետականները տարեր են

Եզ	125	հատ	Պղինձ	117	կտոր
Կով	115	"	Կապերտ	95	"
Ոչխար	492	"	Անկողին	321	ձեռք
Հրացան	22	"	Դրամ	6.570	դահ.

Եւ ուրիշ շատ մը մանրմունր իրեղէններ։

Աղբիւրին գլուխը և Սօսին, իր վէրքերով աւելի գեղեցկացած, քաղաք բերին և թրքական քէյֆեր կատարեցին. երկրորդ առտուն հրապարակի վրայ, նահատակին գլուխը կրկին ցցի վրայ ցոյց դնելէ ետքը, մեծ յաղթանակով, տավուլներով. դրօշակներով Բաղէշ տարին։ Լուր եկաւ թէ Սօսին ճամբան մեռեր է, բայց ստուգուած չէ դեռ։ Բաղէշի կուսակալը և իրենները երկու ժամ ընդառաջ գացած են Ալայ պէյին, կարծես ռուսաց վրայ մեծ յաղթանակէ մը դարձած ըլլար։

Յ. Գ. — Մուշի առաջնորդը դէպքին մանրամասնութիւնը տեղեկագրեց արդէն պատրիարքարան։

Եսօր հետ կը խրկեմ Սերոբին նուիրած ժողովրդական երգ մը, որ տեղացիներէն ստեղծագործուած է։

„ԱՂԲԻՒՐ"

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

1. Խլաթի գաւառ,
Սոխորդ գեղ ըսուած,
Իրեն բնակէ՜չ
Աղբիւր ջան
Բարիքով լցուած։

2. Պօղոս, Գրիգոր՝
Թիւրքին սիրական
Կ'ուզեն վերջացնել,
Աղբիւր ջան,
Ամբողջ Հայաստան։

3. Պօղոս, Գրիգոր
Խորհուրդ կազմեցին,
Թիւրք ոստիկաններ,
Աղբիւր ջան,
Ամբողջ կանչեցին։

4. Սանաթ տըւեցին
Նորէն խրկեցին,
Թնդում ու Սոխորդ,
Աղբիւր ջան
Յանկարծ պատեցին։

5. Անիծած Դաւիթ
„Աղա-ջան" կանչեց.
—Կեղծութեամբ ըսաց—
Աղբիւր ջան,
Թէ զօրք մեզ պատեց։

6. Անիծեալ ըլլայ
Դաւիթ ծնած տեղ.
Աւերակ դառնար,
Աղբիւր ջան,
Կոշտեան ըսուած գեղ։

7. Սոխորդայ վերև՝
Նումրութ մեծ սարէն
Ցուցակ տըւաւ մեզ,
Աղբիւր ջան,
Չէն մսիններէն։

8. Բաղէշ վիլայէթ
Անուն Սալվի-Զօր՝
Սօսի [1]) կը կանչէ.
„Հոգիս ջան,
Կծանքդ ազգին տուր։"

9. Կեցցէ՛ քաջ Աղբիւր
Եւ իր մօսինին.
Յիսուն և հինգ զօրք
Աղբիւր ջան,
Ըրաւ ցան ու ցիր։

10 Անունդ էր Աղբիւր
„Մինչև Ռուսաց Դուռ
—Աշտ կը գրէր —
Աղբիւր ջան
Կտրա՛, վճիռ տուր"։

ՆԱՄԱԿ ԱԼԱՇԿԵՐՏԷՆ

(ՌՈՒՍ-ԹՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԷՆ)

Հոկտեմբեր 27-ին խումբ մը զինակիր հայեր Ալաշկերտէն անցած ատենին պահ մը դադար առնելու համար, կըստիպուին Խասսուր գիւղի ս. Աստուածածին եկեղեցին ապաստանիլ, կարելի եղածին չափ հետքերնին կորսուկ պահելով։

Կառավարութիւնը հոտ կ'առնէ — ինչարկէ մատնիչի միջոցով։ Տէրվիշ աղա (տեղին միւտիրը), իր տղով և բազմաթիւ քիւրդերով կ'ուգայ կը պաշարէ եկեղեցին և կը հրամայէ խումբին զինաթափ ու անձնատուր ըլլալ։ Այդ ըսելուն չի մնար, երբ խումբէն մէկը կրակ կընէ և Տէրվիշ աղան վար կը գլորի։ Կռւի կատաղի նշանն էր այդ։ Տէրվիշ աղայի հետ իր տղան և շատ մը քիւրդեր գնդակահար կ'իյնան։ Լուրը, կայծակի պէս ամէն կողմ տարածուելով, Մոլլա-սիւլէյման գիւղէն քանի չափ ոստիկաններ, իրենց զինուորական մեծին հետ, և ուրիշ կողմէն անթիւ քիւրդեր, կը հասնին և կը խառնուին կռուին վայրը։ Կռիւը աւելի յանդուգն և մոլեգին կերպով կը շարունակուի մինչև իրիկուն, թշնամին զգալի կորուստով։

Մթնշաղին, քիւրդերը այս անակնկալ դիմադրութենէ և իրենց կրած կորուստէն կը վհատին, որով մէջերնին անկարգութիւնը կըսկսի տիրել։ Զինակիրները օգտուելով ասկէ, մթուն, 60 խաստուրցիներ հետերնին, կը ճեղքեն պաշարման գիծը և կ'անցնին լեռները։ Թշնամին չի յանդգնիր հետապնդել զանոնք. կռուին մէջ հայերու կողմէն կ'իյնան 30 հոգի։

Կառավարութիւնը կարծելով որ այդ խումբը Դու-

1) Սօսի կամ Սօսուն Աղբիւրի կնոջ անունն է։
Ծ. Խ.

տակի ճամբով նորբին գաւառներուն մէջ թափանցած ըլլայ. իսկոյն ամէն կողմ լուր կամ հեռագիր կը խրկէ, որ ճամբաները կտրեն։

Զինակիրներու քաշուելէն ետքը Խաստուրը կը դառնայ աւարի և արեան դաշտ։ Արիւնկզակ պաշիպօզուկները գիւղը հիմնովին կը թալանեն, կը կողոպտեն լուսաւորչական և կաթոլիկ եկեղեցիները, գիւղին քահանաներուն երկուքը կըսպաննեն և ժողովուրդէն ծեր, այր, կին, երեխայ, անխտիր, 300 հոգիի չափ, գազանային անխղճութիւնով մը սրէ կանցնեն։ Հարսներ, աղջիկներ կ'առևանգուին։ 150 տուն Խաստուրէն մնացած ցիրուցան մանկտիներ ու պառաւներ շրջակայ գիւղերը ապաստանած, բորիկ ու մերկ, մուրացկանութիւն կ'ընեն անօթութենէ չմեռնելու համար։

Քիւրդերը ատով ալ չեն բաւականանար, աւարառութեան ծարաւնին այնքան կը սաստկանայ որ միաժամանակ կը թալնեն Զէոկան, Խոշիան, Մոլլա-սուլէյման, Եղնի-թէփէ և Ամաս գիւղերը։ Կողոպուտը առանց զոհի չըլլար, սպանուածներ և վիրաւորուածներ կան։

Արդէն կոտորածը և աւարառութիւնը եղած լմնցած էր, երբ Մշուեղ կը հանուի կայսերական անունով քաշուած հեռագիր մը, որով կը հրամայուէր ապստամբական շարժման հետ յարաբերութիւն չունեցող վայրերը պաշտպանել քիւրդերու յարձակումներէն և նոյնիսկ սպառնացեր են քիւրդերուն, որ եթէ չհնազանդին կանոնաւոր զօրք պիտի խրկուի վրանին (ևս՞)։

Թիւրք կառավարութեան սովորական սիստէմն է, նախօրոք հրահանգներու համաձայն անլուր գազանութեանց ասպարէզ տալէն վերջը, իսկոյն գթառատ կայսեր մէկ հրամանը կը հասնի, որ կը հրամայէ կաւատ խալիֆայական իրատէով մը, որ իր հաւատարիմ հայ հպատակներուն խնայուի։

Թօփրագ-գալէի գայմագամը և առաջնորդական տեղապահ Բղնունի Մամբրէ վարդապետը արիւնահեղութեան վայրը գացին գիւղացիներուն կրած վնասներու, կորուստներու և մահերու չափը իմանալու և տեղեկագիր մը պատրաստելու համար։

Յետո՞յ... — Եըլտըզի համար այդ սիրտ ղողացնող տեղեկագրէն ետքը սուլթանը պոկուինքները լաւ մը կը լըստէ դունչը արեան ճապաղիքներու մէջ խոթած շան մը պէս։

ՆԱՄԱԿ ԲԱԼՈՒԷՆ

27 Հոկտեմբեր 1889

Հայուն համար ամէն մէկ վայրկեան, ամէն մէկ շընչառութիւն արհաւրալից տարիներ են՝ որ կ'անցնին, սև յուսահատութիւն մը, անհուն աւեր մը թողլով իրենց ետին։ Մէկ կողմէն թշուառութիւնն ու աղքատութիւնը իրենց մահաբեր ճիրաններով կը կրծեն, կը լափեն օրէօր խեղճ հայութիւնը, միւս կողմէն բռնապետին անգութ, երկաթէ թաթը կը հարուածէ, կը քանդէ անդադար։ Օրերը տրտում ու տարտամ մթութեամբ մը կը սահին, կեանքը պատիժ մը, պատուհաս մը կը թուի. թշուառութեան հոսանքը կը պատէ, կը պաշարէ մեզ ամէն կողմէն։ Ո՞ւր երթայ, ի՞նչ ընէ խեղճ հայը։ Ամէն քայլափոխիդ թշնամին դիմացդ է, արիւնռուշտ ու գժխեմ, սուսերամերկ և վայրագ․․․

Նորէն Մեծ Մարդասպանին հլու արբանեակները, Բալուի խորը՝ աւերակներու մոխրակոյտի մը վրայ վերըստին բոյն դնող աղքատիկ, աւուր հացի կարօտ, խաղաղիկ ժողովուրդի մը մէջ յեղափոխական պատրուակներով շարք մը անլուր, քստմնելի ոճիրներ գործեր են, որոնց արձագանգը սիրտ կը կտրտէ։

Պօլիսէն տարագիր Հալավցին անօթի, ծարաւ Խարբերդի փողոցներուն մէջ կը թափառի, թշուառութեան դառն դրօշմը ճակտին վրայ. իր ընտանեկան այնքան դժնդակ հոգերէն ծռած գլուխը հանգչեցնելու տեղ մ'անգամ կը գլացուի անոր։ Գերման որբախնամ միսիօնարութիւնը յիսուն ոսկիի նպաստ մը տուած է Հալավցիներուն՝ մասամբ ամոքելու համար համատարած թըշուառութիւնը։ Բայց եկուր տես, որ կառավարութիւնը սկսած էր դժոխային մտքեր յղանալ այդ նպաստի բաշխման մէջ, իբր թէ հայերը այդ դրամով զէնք պիտի առնէին։ Ուստի պատրուակ մը կը փնտռուէր, որ և, իհարկէ, չ'ուշացաւ։ Օր մը այգեկութի ատեն հրացանի ձայներ կը լսուին խեղճ գիւղացիներու այգիներուն մէջ, անմե՞ղ թուըրտուկ, բայց աւա՜ղ որ ուրուրը գլխընուն վերև էր։ Տեղապահը լրտեսած էր ամէն բան։ Առիթը լաւ առիթ էր. հայը զէնք ունենա՛յ... Իսկոյն քսան հատ հեծելազօրք կը պաշարեն Հալավը։ Ա՛լ անգթութիւնը չափ չ'ունի. հանդիպած գիւղացին գաւազանի հարուածին տակ կիսամեռ կ'իյնայ։ Այսպէս գազանային խժդըժութիւններով ամբողջ համայնք մը ահ ու սարսափի կը մատնեն։ Բռնապետութեան մէկ նոր տմարդի միջոցն է աս, ճերմակ տէռօրը, որուն Մեծ Մարդասպանը նախընտրութիւն տուած է այժմ։ Յետոյ տասներեք հոգի շղթայակապ քաղաք կը տանին։ Ճամբան ձիերու արագ քայլերուն հետ կը քաշկռտեն, խեղճերուն սրունքները կը ջախջախուին ձիերուն երկաթէ պայտերուն տակ, արիւնի կաթկթուն հետք մը ձգելով իրենց ճամբուն վրայ։

Հիմա Հալավը դատարկուած է երիտասարդներէ, որոնք փախեր, մերձակայ գեղերը ապաստաներ են։ Ծեր մարդուկներու ու պառաւ կնիկներուն մնացած է գիւղը, որոնց լաց ու կոծանքը կը լսուի միայն, անմարդաբնակ անտառի մը մէջ բուերու եղերական, ողբագին, խուլ հառաչներուն պէս ահաւոր տպաւորութիւն մը գործելով մարդուն վրայ։ Շրջակայ պէկերը, որոնց կը պատկանի գլխաւորաբար Հալավի հողը, առօք փառօք եկեր նստեր են Հալավի մէջ։

Օսմանեան պոռնիկերան դիւանագիտութիւնը այս անգամ ալ, իհարկէ, պիտի խաբէ միշտ խաբուիլ սիրող Եւրոպան. թերևս ձեւականութեան համար մինչև անգամ տեղապահը Պօլիս կանչուի Հալավի անցքերու պատասխանատուութիւնը (°°) պահանջելու...

Այս արիւնոտ անցքերը արձանագրած միջոցիս չեմ կրնար չ'անդրադառնալ զայրագին կիրքով մը, մեր անտարբեր դասակարգին վրայ, որ այդպիսի դժոխային իրականութիւններու դիմաց իսկ քարսիրտ և չարսիրտ անգթութիւն մը ցոյց կուտայ՝ միշտ մեղադրանքը մեր հայ եղբայրներուն վրայ նետելով։ Սորուկ, հոտած մըթնոլորտի մը մէջ, ափսո՜ս, որքան խարխափ մնացեր ենք. զուրկ հոգեկան ուժերէ և թրթռումներէ։

Հայ ժողովուրդ, դարաւոր ստրկութեան շղթաներուն տակ արդէն ընդարմացած կ'երևիս, անտարբեր աչքով դիտելով անմեղ զոհերուդ ծաղիկ արիւնին կաթկթիլը,

վայրենի թշնամիդ սուրին ծայրէն։ Հերի՛ք. ժամանակ չէ վհատելու ու ընկրկելու… Վերականգնենք պատէնիս մեր տառապանքին մէջ մխրճելով մեր պողովատիկը։ Ժողվենք ուժերնիս կեանքի և ազատութեան մեծ կռւին համար և ջանանք ձեռք ձեռքի ստեղծել այս չար ու բարի աշխարհին մէջ մեզի համար երկիր մը՝ ուր արիւնի տեղ կանաչներ ծլին և որոնց հետ մեր հոգիներն ալ փացւին բարձր իդէալներու և երկինք մը՝ որ աստւածային ժպիտներ տայ մեզի փոխանակ աղի արցունքներու…

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

—

ԱՄՍԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

15/27 Նոյեմբեր 1899

Իրատէ՞ին հետևանքները։ Կայսերական իրատէէն առաջ՝ գաւառներէն հոս և ասկէ գաւառներ քանի մը հայ ճամբորդներ դեռ ևս կարող էին երթևեկել՝ կաշառքի կամ խնդիրքի զօրով։ „Ողորմած“ իրատէին երևնալէն ետքը ատ ալ կտրեցաւ։ Թիւրք կառավարութիւնը ժողովրդական առածի սատանային պէս՝ ամէն բանին հակառակը կը հասկնայ։

Հոկտեմբեր 24-ին, այսինքն իրատէէն բաւական ատեն ետքը, ասկէ հեռագիր մը գնաց գաւառական իշխանութիւններուն, որ դուրսերէն եկող հայերը չթողնուին իրենց տեղերը վերադառնալու։

Առհասարակ եթէ հայ մը գաւառներէն կուզէ գործով մը հոս գալ, կամ թոյլտւութիւն չի ստանար կամ կանոնաւոր „թէզքէրէ“ ալ առնէ, ճամբայ ելլելուն՝ ծովափերու վրայ տեղ մը կ՚արգելւի կը մնայ։ Ասկէ ծննդավայր մեկնողները ևս նոյն բախտին կ՚արժանանան։

Սամսոն, Կիրասոն, Տրապիզոն լեցուն են կամ գաւառներէն հոս գալու կամ ասկէ գաւառները երթալու համար կանոնաւոր անցագիր առած հայերով։ Կը մնան խեղճերը խաներու մէջ, անգործ, սպասելով ճամբան շարունակելու հրամանին։ Ունեցած ստակնին ալ կը հատնի, կընկնին ծանր աղքատութեան և յուսահատութեան մէջ. իսկ անդին ունեցած առևտուրնին կամ այլ գործերնին կոշնչանայ, օջախնին կը մարի, որուն հետևանքն է հիւանդութիւն, աղքատութենէ ծնած յուսահատութիւն, մահ, անձնասպանութիւն և իր սարոփը։

Կառավարութեան ուզածն ալ ատ է. փճացնել քայքայել հայու թէ տնտեսական, թէ՛ բարոյական կեանքը, ստիպել զանի թողնելու իր հայրենիքը և երթալ ուր որ կ՚ուզէ։

Բաղմաշնորհ կայսերական իրատէի երևնալէն ետքը պետութեան այս „տակտիքը“, անոր վարմունքին այս եղանակը աւելի բացայայտ, աւելի անպատկառ կերպով գործադրուիլ սկսաւ։

Տրապիզոնի մէջ 200-է աւելի ճամբորդներ ժողովւած են և հրամանի կըսպասեն ճամբանին շարունակելու համար։ Թոյլտւութիւն չկայ ու չկայ։ Տեղւոյն առաջնորդը պաշտօնական նամակ մը կը գրէ պատրիարքարան, խնդրելով միջամտել կառավարութեան առաջ այդ սովամահ ըլլալու վիճակին հասած խեղճերուն ճամբայ մը բանալու համար ու մատնացոյց կընէ կայսերական իրատէին տւած մէկ „գթառատ շնորհը“, որով ճամբորդութեան դիւրութիւններ կը խոստացւին հայերուն։ Օրմանեան, լիրբ անտարբերութիւնով մը կը պատասխանէ. „Այդ ճամբորդներուն համար ես բան մը չեմ կրնար ընել. դու աշխատէ, ճամբայ մը գտիր՝ ղրկէ“։

Իրատէին վրայ յոյսերնին դրած, քանի մը միամիտ հայ վաճառականներ ելեր եկեր են Պոլիս առևտուրի և ահա քանի մը շաբաթ է բանտէ բանտ կը տարւին։ Մէկ քանիներն արդէն ետ ղրկւեցան, վերջին դահեկաննին տղրուկ պաշտօնեաներու գրպանները լեցնելէն ետքը. բանտերէն ալ ուղղակի նաւ տարւեցան, ծանօթներու երեսնին անգամ չկրնալով տեսնել։

Այս ամէնուն հանդէպ գիտէ՞ք ինչ դիրք բռնած են մեր ազգային իշխանութիւնները, մեր Օրմանեաններն ու Արթինները։

Փոխանակ բողոքելու, փոխանակ յիշեցնելու սուլթանին ըրած գէթ վերջին գրաւոր շնորհը՝ այդ ստորաքարշ միմոսները շնորհակալութեան ուղերձ մը կը պատրաստեն սուլթանին ու կառավարութեան՝ ըրած անպատմելի ողորմածութիւններուն համար։

Մարդ էակի մը անվայել բաներ են, ինչքան ալ լիրբ ըլլայ ան։

Նոյեմբեր 6/18-ին, շաբաթ երեկոյեան, Արթին փաշայի տանը ժողով մը տեղի ունեցաւ այդ չարաշուք ուղերձը խմբագրելու համար, որ ետքէն Խառն Ժողովին ստորագրւելու պիտի ներկայացւէր։ Եպիսկոպոսներէն միայն 2 հոգի ներկայ եղած են, իսկ մնացածները մերժած են մասնակցիլ։

Այս ազգադաւ ուղերձին ձեռներէցութիւնը կը պատկանի ճիզւիթ Օրմանեանի և իրեն արժանի խորհրդական ազգասէր Արթինի։

Օրմանեան կռւի խնձորը գլտորելէ ետքը, այժմ ինք զինքը դէմ կը ցուցնէ այդ ուղերձին, համոզւած ըլլալով որ չի կրնար չընդունւիլ. ամէն մարդ իր գլուխը փորձանքի չդնելու համար՝ պիտի ստորագրէ… Իսկ Օրմանեան՝ իր աղուէսութիւնը պիտի բանեցուցած ըլլայ և աժանագին ժողովրդականութիւն շահած միանգամայն։

Անգամ մը եթէ այդ ուղերձը Խառն Ժողովին ներկայացաւ, ալ ստորագրելը պարտաւորութիւն է։ Անհատական առաքինութիւն, սկզբունքի, համոզումի համար ոևէ զոհանք կրելու քաղաքացիական քաջութիւն չիք են հոս։ Շողոքորթելը, ստորանալը, կառավարութեան բարեկամ երևելու հրէշ մը ըլլալը բարձրագոյն բարոյականութիւն կը համարւի։ Իրենց սողունի գոյութիւնին պաշտպանելու համար պատրաստ են ոտքեր պագնել, մեղայագրեր ստորագրել, ամէնէն նողկալի ուղերձներու տակ ստորագրել. դաւաճանել… Ընառակային բաներ են, բայց գոյութիւն ունին. ցաւ է։

Ահա բարոյական այն հսկայական անկումը, որուն վիճակւած ենք մենք Պոլսի հայերս այսօր…

*

Աշըգեան։ Հոկտեմբեր 26-ին մեռաւ Խորէն արքեպիսկոպոս Աշըգեան, Պոլսի նախկին պատրիարքը։ Հոս ամէնուն ուշադրութիւնը դարձաւ այն երևոյթին վրայ, որ

15 տարի առաջ, նոյն օրը մեռաւ և վարժապետեան։

Ի՜նչ մեծ տարբերութիւն. Ներսէս ու Աշըգեան, երկու հակածայրեր... Մէկը հայու ամէն սուրբ ձգտումներու մարմնացում, միւսը... Եւ ի՜նչ չափ մեծ էր ժողովուրդին բռնած դիրքին տարբերութիւնը։ Այն ատեն ամէն հայ լացաւ, գէթ խորունկ „ա՜խ" մը արձակեց իր կուրծքէն, իսկ այժմ, բացի քանի մը կրօնաւորներէ և հայ-թուրք էֆէնտիներէ, ո՛չ ոք տեղէն շարժեցաւ։

Օրմանեան փառաբանական դամբանական մը ըսաւ՝ գովեց զայն իբր վանահայր, իբր գրականագէտ և մանաւանդ իբր պատրիարք, ազգին ու կառավարութեան հ ա ւ ա տ ա ր ի մ...

Այո՛, կառավարութեան հաւատարիմ էր Աշըգեան, անուրանալի է։ Իսկ ազգին հաւատարիմ ըլլալը միայն Օրմանեան կրնայ հասկնալ։ Աշըգեանն է Օրման-Արթինի „թրքին-բարեկամ" քաղաքականութեան նախահայրերէն մին. ատոր համար Օրմանեան բառեր չէր գտնէր զայն երկինք թռցնելու համար։

„Պատրիարքական բարձր պաշտօնին վրայ կեցածները աւելի հեռու կը տեսնեն, ըսաւ Օրմանեան. վարիները յաճախ չեն հասկնար անոնց դրութիւնը և անիրաւօրէն կը քննադատեն զայն, յարձակում կը գործեն անոր վրայ"։ Պարզ էր, որ Օրմանեան այս բառերով աւելի ինքզինքն իբր անմեղ զոհ մը ներկայացնել ուզեց, քան Աշըգեանը պաշտպանել...

*

Կ ի լ ի կ ի ա։ Կրետէէն, Կովկասէն, Ռումանիայէն ու Պուլգարիայէն բազմաթիւ մահմետականներ կը գաղթեն Թիւրքիա։ Արդէն 11.000-էն աւելի կան Իզմիրի շրջակայքը։ Ասոնցմէ 3.000 հոգի՝ Նոյեմբեր 6-ի (ն. տ.) կայսերական իրատէի մը համաձայն՝ խրկուեցան Կիլիկիա, Ատանայի վիլայէթը, ուր 3 գիւղ շինուած է անոնց համար պետութեան հաշւով. 2.000 ալ խրկուեցան նորէն Կիլիկիոյ սահմաններուն մէջ, Հալէպի վիլայէթը։ Հոկտեմբեր 30-ին ալ Ռումանիայէն նոր եկած 500 գաղթականներ ասկէ Իզմիրի վրայով Էնկիւրի խրկուեցան՝ հոն հաստատուելու համար։

Ռուս-թիւրքական պատերազմէ իվեր աս է կառավարութեան քաղաքականութիւնը. լեցնել հայաբնակ գաւառները գաղթական մահմետականներով և հայերը հալածել, կոտորել, թիւը նուազեցնել։

*

Թ ր ք ա կ ա ն գ ո ր ծ ե ր։ Հոկտեմբեր 29-ին սուլթան ստորագրեց իրատէ մը. „թոյլատրել այս ինչ անուն ընկերութեան վանայ լճին վրայ շոգենաւեր բանեցնել և շոգենաւային երթեւեկութիւն հաստատել"։

Եթէ... իրականանայ։

—Կայսերական հարեմի ներքինապետ ամենազօր Ջէվհէր աղան Մէքքէ աքսորուեցաւ։ Թշուառականը պալատի մէջ լրտեսի պաշտօն է ունեցեր Անգլիոյ կողմէն։ Ռուսական դեսպանատուն կ'իմանայ այս, ու կերպով մը սուլթանի ականջը կը հասցնէ. Ջէվհէր կ'աքսորուի։

Եթէ քիչ մը մօտէն քննութիւն կատարուի, Եըլտըզի պալատին ամէն պաշտօնեաններն ալ Մէքքէ պիտի խրկուին, որովհետեւ ամէնն ալ աս ու ան պետութեան վարձուած լրտեսներ են։

—Երրորդ անգամն է Համիդ իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Մծ-եպարքոսին իր միակ զաւկին Ջաւիտ պէյի սպաննման համար։ Այս անգամ ալ ցաւակցութիւնը համեմուած էր բաւական խոշորկեկ գումարով մը։ Սուլթան անոր տղուն մահուան կսկիծը ստակով կուզէ խեղդել։

Թէ Ջաւիտի սպանումը, թէ Շէֆքէտ էֆէնտիի յանկարծակի մահը բացատրութիւն կը գտնեն սապէս։ Երկուքն ալ հակահամիդական և քիչ մը աւելի ազատական կուսակցութեան մարդեր են եղած և երկուքն ալ վեհապետի հրամանով են զոհուած։ Հաճիրին Մուսթաֆային ատրճանակի գնդակը գործեր է պալատի հրամանով, իսկ Շէֆքէթ էֆէնտին տ ա ճ կ ա կ ա ն ս ո ւ ր ճ ի ն զոհ է եղեր։

Մուսթաֆան քննութեան կենթարկուի։ Արդարադատութիւն չէ, այլ կօմէտի մը. ամէն նշան կը ցուցնէ, որ պիտի ազատի կամ իր գաւառը ա ք ս ո ր խրկուի։ Մեծ եպարքոսէն ալ զօրեղ ձեռք մը զայն կը պաշտպանէ...

$^{15}/_{27}$ Նոյեմբեր

Փ ա ռ ա բ ա ն ա կ ա ն ո ւ ղ ե ր ձ ը։ Ստորնութեան ու խայտառակութեան բաժակը լեցուեցաւ. ա՛լ տեղ չկայ։

Թիւրքիոյ լայնածաւալ կայսրութեան մէջ անկիւն մը չկայ, ուր հայը չհալածուի. անկիւն մը չկայ՝ ուր հայու աչքէն արցունքի տեղ արիւն չհոսէ... անկիւն մը չկայ, ուր հայը իր խոնջացած ու թշուառ գլուխը վար դնէ... և մեր ազգային իշխանութիւնները. մեր պատրիարքն ու Խառն Ժողովը „Կարմիր Գազանին" փառաբանութեան, շնորհակալութեան լկտի ուղերձ, կը ներկայացնեն։

Կատարուեցաւ։ Ուրբաթ երեկոյին, Նոյեմբեր $^{21}/_{12}$-ի դժբախտ գիշերը Խառն Ժողովին ներկայացուցին Արթին և Օրմանեան իրենց նախաձեռնութեամբ գրուած ուղերձը։

Անդամներէն շատերը ներկայ չէին։ Ներկայ եղողները անբանային անտարբերութեամբ ստորագրեցին ուղերձը։ Բացակայներուն ալ հետեւեալ առտու ներկայացուցին և անոնք ալ սուսի՜կ-փուսիկ ստորագրեցին։ Եւ ոչ մէկ անձ մը, և ոչ մէկ զգացմունքի տէր հ ա յ մը գտնուեցաւ մէջերնին, որ հ ա մ ա ր ձ ա կ է ր չստորագրել, գէթ ք ի՜ չ մ ը բ ո ղ ո ք ե լ...

Շաբաթ կէս օրէն քիչ մը առաջ, բռնաւորուած խայտառակութեան այդ հսկայական աղբով՝ Օրմանեան գնաց պալատ, ներկայացուց այդ իր դատապարտութեան էութիւնը կազմող ուղերձը Հրէշի առաջին քարտուղարին։ Ներկայացաւ... ոչ Օրմանեան... թուղթը՝ Հրէշին. ան ալ իր գոհունակութիւնը յայտնեց։ Եւ Օրմանեան, գոհ սրտով, մեկնեցաւ պալատէն գերագոյն պարտք մը կատարած ըլլալու սրտաշարժ ախմախութիւնով մը։

Կը զրուցուի, որ Արթին խմբագրած էր ուղերձը աւելի հ ա ւ ա տ ա ր մ ա կ ա ն, աւելի ք ծ ն ո ղ ոգիով մը և Օրմանեան քիչ մը — իբր թէ — բարեփոխած է ու ատոր համար ալ Թահսին պէյ ք ի չ մը սառն օրէն ընդունելութիւն ըրած է։

*

Կ ա ր ե ւ ո ր ձ ե ր բ ա կ ա լ ո ւ թ ի ւ ն ն ե ր։ Նոյեմբեր $^{4}/_{16}$-ի գիշերը Ըսպանական կայսերական թիկնապահ գունդի զինուորները, Եըլտըզի խիստ գաղտնի հրամանի մը համաձայն, մտան երեք անձերու տունը.

երկուքը տունը գտան, անկողիններէն հանեցին և ծածկուած կառքերով տարին պալատ, իսկ երրորդը Ատալպերդ Մահքմուտպիին „Ուրիէլ-Աքոստա“ ներկայացումէն դուրս ելած ատենը ձերբակալեցին ու տարին։ Ձերբակալուած անձերն են. Մ ո ղ լ ա Զ ի ա Գ ա զ ա ս կ է ր, Շէյխ-իւլ-իսլամի կրօնական բարձր խորհուրդին անդամը, սուլթանէն ու Շէյխ-իւլ-իսլամէն խիստ սիրուած, բազմաթիւ շքանշաններով, աստիճաններով ու փառքով զարդարուած մէկը. ամէնէն գիտուն ու լուսաւոր մտքան։ Գ ե ր ի դ պ է յ՝ պետական խորհուրդի քաղաքացիական մասի անդամ, հմուտ իրաւագէտ և լուսաւորեալ ու ազդեցիկ անձ մը։ Ս ա յ իդ պ է յ, որ ներկայացումէն ելած ատենը բռնուեցաւ՝ թրքական աքատեմիք բառարանին հեղինակն ու խիստ յայտնի հրապարակագիր մըն է. ըլլալով հմուտ ու ուսեալ փաստաբան մը՝ Սայիդ հասած էր պետական խորհուրդի իրաւաբանական մասի նախագահի պաշտօնին, զոր կը վարէր քանի մը տարիներէ իվեր։

Երեքն ալ նշանաւոր անձեր, բազմաթիւ ազդեցիկ կուսակիցներով, ազգականներով ու ընկերներով։ Ասոնցմէ ետքը ձերբակալուեցան և այլ 70-ի չափ քիչ կամ շատ կարևոր անձեր։

Նոյեմբեր $^{5}/_{17}$-ին պալատի մէջ գումարուեցաւ արտակարգ դատարան մը, որոյ անդամներն էին մեծ-եպարքոսը, զինուորական, ներքին գործոց և արդարութեան նախարարները, ոմբաձիգ զօրքի ընդհանուր հրամանատարը, պետական խորհուրդի նախագահը և շէյխ-իւլ-իսլամը։

Երկուշաբթիէ մինչև հինգշաբթի տևեց դատը։ Անդամներէն երկուքը մեղադրեալները մահու կուզէին դատապարտել, բայց մեծամասնութիւնը, գիտելով զանոնք մեղաւոր բարձրագոյն անձին դէմ դաւադրութեան մէջ, դատապարտեց զանոնք Հարաւային Արաբիա յաւիտենական աքսորի։

Նոյեմբեր $^{8}/_{20}$-ին Արաբիա գացող Մահմուտիէի շոգենաւը տարաւ այս նոր 3 լուսամիտ գլուխներն ալ... Ես երեքն ալ գացին աւելանալու այն անթիւ աքսորականներու, թունաւորուածներու, կախուածներու ու անյայտացածներու ընդհանուր թուին վրայ, որ ամէն տարի կը հնձէ Եըլդըզի Մեծ-Մօլոխը...

Երեք դատապարտեալներու տունները կատարուած խուզարկութիւններու ատեն գտնուեցան շատ մը թուղթեր։ Երեքն ալ եղած են սերտ յարաբերութեան մէջ Հայրէդդին բրինսին հետ (սուլթանի եղբայրը) և կուզեն եղեր Համիդը տապալել և անոր տեղը դնել կամ Հայրէդդին կամ Ռաշիդ բրինսներէն մին։ Ոմանք ալ կըսեն թէ դաւադրութեան ոգին եղած է սուլթանէն ատած իր երեց որդին՝ Մէհմէտ Սէլիմը։

Աքսորուածները ամէնքն ալ ազդեցիկ և յայտնի անձեր են։ Թիւրքը բարձր շրջանները խիստ վրդովուած վիճակի մը մէջ են։ Օրէօր կըսպասուին նոր ու անակնկալ ձերբակալութիւններու։

*

Քանի մը բարձրաստիճան թիւրքեր (շուրջ 30 հոգի)՝ փ ո յ ի թ ի ք ա մը բանկցուցած ըլլալու համար՝ անգլիական դեսպան սրբ. Օ'Քոնորի համակրական ուղերձ մը կը ներկայացնեն Թրանսվաի դէմ բրած յաղթութեան առթիւ։ Ուղերձին լուրը կիյնայ սուլթանի ականջը. կասկածը կը ծնի։ Սուլթանը կը կանչէ այդ 30-ն ալ պալատ և անոնցմէ շատերը բանտարկել կուտայ։ Օ'Քոնոր կը լսէ այս և նոյեմբեր $^{23}/_{11}$-ին պալատ կըշտապէ հանդիսացնելու սուլթանին հիւանդ երևակայութիւնը։ Կը բացատրէ որ ուղերձը միայն Թրանսվալի պատերազմին մէջ անգլիական զէնքին տարած յաղթութեան առթիւ է, և այլն։ Որո՞ւ կըսես. դեսպանի միջնորդութիւնը կասկածը աւելի կը բորբոքէ... Բայց իվերջոյ սուլթանը զիջաւ, դեսպանին եռանդուն միջամտութեան վրայ, ազատ արձակել զանոնք։

Նոյեմբեր $^{24}/_{12}$ Պարոն Քոն-Մարշալը, գերման դեսպանն ալ եկաւ սուլթանին այցելութեան։ Նիւթն էր Պաղտատ-Պօլսոյ երկաթուղին։ Սուլթան յայտնեց որ թէ իր հօր և թէ իր երազածն է եղեր ատ երկաթուղին, բայց իր նախարարները շա՞տ մը կարևոր հարցեր ունին ուսումնասիրելու, վերջացնեն՝ այն ատեն ես անպատճառ գերմանացիներուն կը յանձնեմ, քանզի ես այդ ժողովուրդը խիստ կը յարգեմ ու կը սիրեմ՝ ըսեր է։

30 Նոյեմբեր

Մուշէն, Թօփրագ-Գալէէն, Կարինէն և Պիթլիսէն եկած են տեղեկագրեր, որոնք կը նկարագրեն հոկտեմբեր 27-28-ի դէպքերը Ալաշկերտում և Սասունում։

Այս տեղեկագրերը, որոնք իրենց մանրամասնութիւններով սարսափ կ'ազդեն ամէն մի մարդու վրայ, կը կարդացուին Խառն Ժողովի մէջ նոյեմբեր $^{18}/_{30}$-ին, ուրբաթ երեկոյեան։ Ժողովի անդամներէն մէկ քանին, չնայելով տիրող անբարոյական „խոհեմութեան“, սաստիկ կծու լեզու մը կը բանեցնեն Օրմանեանի դէմ, որ պէտք եղած դիմումները չըներ։ Ժողովականներէն մին նոյնիսկ կը յանդգնի օսմանեան „դէստուրին“ մէկ կտորը կարդալ որու մէջ ըսուած է մօտաւորապէս հետևեալը. „երբ անձ մը կը տեսնայ իր պատիւը բռնարարուած, իր ինչքը կողոպտուած ու իր կեանքը փտանքի մէջ՝ կրնայ յաճախ դիմել ինքնապաշտպանութեան ապօրինի միջոցներու։ Այդպիսիները դատած ատենը պիտի աչքի առաջ ունենալ մեղմացուցիչ պարագաները“...

Կը հասկցնեն Օրմանեանին, որ այդ իսկ մտքով դիմում մը ընէ. ցուցնէ գաւառներու հայերու քաշած անտանելի նեղութիւնները, անոնց դժոխային պայմանները և ատկէ յառաջացած բնական հետևանքները և այլն... Բայց որո՞ւ կըսես... Իսլամ Օրմանեանի՞ն։

Հարաթ առտու Օրմանեան գնաց պալատ... Բայց ամէն մարդ խորունկ համոզում մը գոյացուցած է, որ բառ մըն ալ ի պաշտպանութիւն ճնաչաւածներու կամ կուռներու պապանձեալ բերանէն չէ հանած։

*

Նոր լուր մըն ալ։

Լուրեր կը պտտին որ Օրմանեանի և պալատի մէջ բանակցութիւններ կան հայերէն զ ո ր ք ա ռ ն ե լ ո ւ համար, իրր վարձատրութիւն ջարդերու ատենէ մնացած ապառիկ հարկերու։ Բանակցութիւնները դեռ ես գաղտնի կը մնայ։ Սպասենք լոյս աշխարհ ելլելուն Օրմանեանի փորի գևերուն։

*

Բարձրագոյն Դուռը կրկին շրջաբերականներով դիմեց մեծ պետութիւններուն և հրաւիրեց անոնց ուշադրութիւնը եւրոպական փոստատուներու գործադրած

անկանոնութիւններու վրայ ըսելով որ այդ փոստաները, հակառակ եղած պայմաններուն, արգիլուած թուղթեր, լրագրեր, գիրքեր ու ծրարներ կը փոխադրեն։ Այդ շրջաբերականներու արդիւնքն այն եղաւ, որ տեղւոյս դեսպանները խստիւ պատուէրներ խրկեցին իրենց փոստատուներուն հայերէն և թիւրքերէն տպագրած թուղթեր ու լրագրեր տէրերուն չհասցնելու համար։ Քամի մըն է կը փչէ...

*

Ռուսական դեսպանը նոր դիմում մը ըրաւ անցեալ օր կայսերական կառավարութեան (դեկտ. 10 ն. տ.) և հրաւիրեց անոր ուշադրութիւնը այն երևոյթին վրայ, որ Վանի, Էրզրումի և այլ սահմանակից վիլայէթներէն դէպի Կովկաս խուժող հայ գաղթականներու թիւը նորէն կաճի. այդ վիլայէթներու, մասնաւորապէս Վանի մէջ տիրող սովի ու նեղութիւններու պատճառով։ Դեսպանը կառաջարկէ պէտք եղած միջոցները ձեռք առնել այդ հոսանքին առաջն առնելու համար։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՈՒԹԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

(Վերջ ութերորդ նամակի)

Պետերբուրգ, 7 հոկտեմբեր

Այդ օրից ռուսաց „քրիստոնեայ" կառավարութիւնը բացարձակ, պաշտօնական հալածանք սկսեց ոչ միայն հայոց հարցի, այլև առհասարակ „հայկական համակրութիւնների" դէմ։ Արգելուեց գրել, խօսել, օգնել. արգելուեց ուէ հանգանակութիւն։ Ոստիկանական հսկողութիւն սկսուեց Կովկասից թիւրքաց Հայաստան և թիւրքաց Հայաստանից Կովկաս անցնողների վրայ։ Սկսեցին, վերջապէս, անվերջ խուզարկութիւններ, ձերբակալութիւններ, բանտարկութիւններ. Կովկասի գլխաւոր քաղաքների բանտերի քաղաքական բաժինները լցուեցին ոչ միայն հայոց ինտէլիգէնտ հասարակութեան, այլև ժողովրդի բոլոր դասակարգերին պատկանող „յանցաւորներով"։ Ապա՝ աքսոր, դարձեալ բանտարկութիւն, դարձեալ աքսոր...

Խստութիւնները սաստկանում էին րոպէ առ րոպէ։ Ամէն ինչ ընկաւ կասկածի, հսկողութեան տակ։ Հայերին արգելեցին նոյն իսկ փող, հաց և ապաստան տալ թիւրքահայ գաղթականներին։ Մարդասիրական օգնութեան գործը դարձաւ քաղաքական յանցանք։ Հայոց մամուլին և բարեգործական հիմնարկութիւններին արգելուեց հրաւէրներ կարդալ և փող հանգանակել յօգուտ փախստական հայերի և անտուն գաղթականների։ Ճշմարիտ է, բարձրագոյն հրամանով թոյլատրուեց հանգանակութիւն անել յօգուտ գաղթականների — քարերը կ'աղաղակէին, եթէ թոյլ չտրուէր — բայց միևնոյն ժամանակ, կենդանի գործը մեռած տառ դարձնելու համար, խստիւ կարգադրուեց, որ այդ փողերը ուղարկուեն կովկասեան կառավարչապետին, որին միայն իրաւունք տուեց, ոստիկանութեան միջոցով փող բաժանել գաղթականներին։

Բայց գիտէ՞ք՝ ինչ կը նշանակի „ոստիկանութիւն" Ռուսաստանում։ Դա այնքան երկիւղ է ազդում ամբոխի վրայ, որ գաղթականները աւելի լաւ էին համարում քաղցած մնալ, քան թէ ոստիկանութեան դիմել։ Եւ եթէ դիմէին էլ, հե՞շտ է միթէ Ռուսաստանում հազար ու մի պաշտօնական ձևականութիւններով ծանրաբեռնուած հիմնարկութիւնների միջոցով փող ստանալ մի այնպիսի բարձր հիմնարկութիւնից, ինչպէս է կառավարչապետի դիւանատունը։ Այդ պատճառով է ահա, որ ճիշդ այն ժամանակ, երբ Կովկասի զանազան կողմերում գաղթականները հալւում էին քաղցից կամ փէտանում գոմերում, երբ տարափոխիկ հիւանդութիւնները կոտորած էին անում նրանց շրջանում,—հաւաքուած փողերը մնում էին անձեռնմխելի կառավարչապետի դիւանատանը, և մինչև այժմ էլ աւելի քան 50 հազար ռուբլի մնում է այնտեղ, հաւանօրէն այն միամիտ ենթադրութեամբ, թէ „կարիք չկայ"։ Երևի, այդ 50 հազար ռուբլին դեռ երկար փակուած կը մնայ դիւանատներում, մինչև որ կը կարգադրուի այդ փողը յատկացնել ներքին նահանգներից Կովկաս բերուող ռուս „գաղթականներին" և կամ մի աւելի աստուածահաճոյ գործի, օրինակ ռուսաց եկեղեցի կառուցանելու Էնդիժանում կամ Բուխարայի խանութեան ուէ քաղաքում...

„Կառավարչական հոսանքը" այնքան փոխուեց, որ ոչ միայն թոյլ չէին տալիս նոր բան գրել յօգուտ թիւրքահայերի, այլև շատ գրքեր, որոնք մի քանի տարի առաջ ռուսաց ցենզուրայի թոյլտուութեամբ, տպագրուում էին Թիֆլիսում, արգելուեցին երկրորդ անգամ տպագրելու։ Այսպէս, օրինակ, Րաֆֆիի „Կայծերը", „Խենթը", „Սամուէլը", որոնք լոյս են տեսել Թիֆլիսում և որոնց մէջ բնականաբար մի հատ բառ անգամ չկայ Ռուսաստանի դէմ, թոյլտուութիւն չստացան երկրորդ անգամ տպագրուելու Ռուսաստանում և այդ պատճառով երկրորդ տպագրութիւնը տեղի ունեցաւ արտասահմանում, Վիէննայի մէջ գտնուող Մխիթարեան միաբանութեան տպարանում։ Նոյնը կարելի է ասել և ուրիշ շատ գրուածների մասին։ Փորձ փորձեցին մի քանի գրքեր տպագրել Պետերբուրգում և Մոսկվայում, ուր հայոց տպարաններ կան և ուր, ինչպէս մայրաքաղաքներում, ցենզուրայի պայմանները աւելի թեթև են։ Բայց անօգուտ։ Շատ շուտով Պետերբուրգի գրաքննիչին կարգադրութիւն ուղարկուեց շատ խիստ լինել հայերէն գրքերի վերաբերմամբ, և շնորհիւ այդ կարգադրութեան՝ այժմ երազել անգամ չի կարելի նոյնիսկ շատ հասարակ բրօշիւրների վերարտատպութեան մասին, որոնք մի անգամ արդէն տպագրուել են այնտեղ։ Էլ չեմ՝ խօսում այն մասին, որ այն, ինչ կարելի է տպագրել ռուսերէն լեզուով կամ նոյնիսկ վրացերէն, թիւրքերէն, նոյնը չի կարելի տպագրել պետութեան „համահաւասար" հպատակ հայոց լեզուով, որովհետև այդ „աչքի փուշ" դարձած հայերի մասին ամէն տեղ „առանձին" կարգադրութիւններ են ուղարկուած։ Նոյն պատճառով դարձեալ, Թիֆլիսում կամ Կովկասի ուրիշ ուէ քաղաքում ցանկացողը կարող է ռուսերէն դասախօսութիւններ կարդալ, իսկ հայերէն — երբեք։

Դա էլ արգիլուած է։

Աւելի աննախանձելի չէ հայոց թատրոնի վիճակը։

Շատ պիէսներ, գլխաւորապէս պատմական կեանքից վերցրած, արգելուեցին վերջին տարիները։ Քառորդ դար կը լինի, որ Թիֆլիսի հայոց թատրոնը Վարդանանց տօնին, — որը, ինչպէս յայտնի է, միաժամանակ և եկեղեցական տօն է, — ներկայացնում էր մի պատմական-ժողովրդական ողբերգութիւն՝ „Վարդանանց պատերազմը“՝ ամբոխին թատրոն գրաւելու համար։ Այդ պիէսը արգելուեց։ Եւ այդ այն անմեղ պատճառով, որ Նրա հերոսը՝ Վարդան Մամիկոնեան, որ ապրում էր մեզանից 14 դար առաջ, կարող է հայրենասիրական զգացմունքներ ներշնչել հանդիսականներին։ Նոյն տեսակէտով արգելուեց և մի այլ ողբերգութիւն՝ „Հուշանիկը“, որ յատկապէս շատ սիրելի էր Թիֆլիսի ժողովրդին, որովհետև մինչև այժմ էլ Թիֆլիսում գոյութիւն ունի այդ կրօնասէր հերոս-օրիորդի անուան նուիրուած մի եկեղեցի, շրջապատուած կրօնական լեգենդներով... Եւ որպէսզի գաղափար կազմէք, թէ ինչքան երեխայական է այդ կարգադրութիւնը, բաւական է յիշեմ, որ „Վարդանանց պատերազմը“, որ տեղի ունեցաւ 5-րդ դարում, քրիստոնեայ հայերի և կռապաշտ Պարսկաստանի մէջ, մինչև այժմ էլ ազատ կերպով ներկայացնում է Պարսկաստանում, օրինակ, Թաւրիզ քաղաքում, և մի քանի անգամ նոյնիսկ պարսից թագաժառանգը և պարսից մեծամեծները եկել են հայոց թատրոն՝ տեսնելու այդ ներկայացումը...

Դա չափից դուրս է. այնպէս չէ՞...

„Տեղական“ խստութիւնները բաւական չէին, ահա Կ. Պոլսից ստացւում է գեսպան Նելիդովի մի գրութիւնը, որով նա՝ խոնարհելով թիւրք կառավարութեան խնդրքի առջև, մինիստրութեան միջոցով առաջարկում է կովկասեան կառավարչապետին „հարկաւոր միջոցներ“ ձեռք առնել, որպէսզի Թիֆլիսի հայոց մամուլը „դադարի Թիւրքիայի դէմ յարձակումներ գործելուց“, և առհասարակ „Կովկասի հայերը յետ կանգնեն թիւրքաց հայերին դրդռելուց“, քանի որ դա „փչացնում է երկու հարևան պետութիւնների բարեկամական յարաբերութիւնները“։ Կովկասի հայատեաց իշխանութեանն էլ այդ էր պակաս. իսկոյն խստութիւնները տասնապատկուեցին և, իբրև հետևանք այդ բոլորի, ամբողջ Ռուսաստանը ականատես եղաւ, թէ ինչպէս 1895 թուականից իվեր հայոց հարցի և առհասարակ հայերի դէմ սկսած հալածանքը քանի գնաց՝ աճեց, զարգացաւ և իվերջոյ ընդունեց քաղաքական պատուհասի կերպարանք...

Տեղի ունեցաւ պատմութեան մէջ չլսուած, չտեսնուած անարդարութիւն։ Նոյն այդ դառն օրերին, երբ ամբողջ թիւրքաց Հայաստանում իրագործուեց Մեծ Մարդասպանի ահռելի ծրագիրը — կոտորել հայերին՝ հայոց հարցը արմատապէս սպանելու համար. երբ հարազատ եղբայրների երկրից փչում էր արևան և դիակների հոտ. երբ բռնապետի սուրը անարգել մեռելութիւն էր տարածում մի խաղաղ ժողովրդի հայրենիքի բոլոր ծայրերում,—նոյն այդ դառն օրերում, ասում եմ, ռուսահայերին խստիւ արգելուած էր ոչ միայն բողոք յարուցանել, այլ և արտասուք թափել, ոչ միայն օգնութեան ձեռք մեկնել, այլ և լաց լինել... Կովկասեան ամբողջ հայութիւնը այդ դառն օրերում, կոտորածների անվերջ ամիսների ընթացքում, այո, չէր կարող բարձրաձայն լաց լինել անգամ, այլ ստիպուած էր, իբր մի սարուկ, կուլ տալ իր աղի արտասուքները, թաղցնել իր անսահման վիշտը և կսկիծը...

Եւ որպիսի՜ հակապատկեր։

Ճիշդ այդ ամիսներին էր, որ ամբողջ Եւրոպայում հայկական կոտորածները հրապարակական քննութեան, անվերջ դասախօսութիւնների և դրելու առարկայ էին։ Լենդօնում բազմամարդ միտինգներ էին լինում յօգուտ հայերի, իսկ Պետերբուրգում տիրում էր գերեզմանական լռութիւն։ Սասունից փախստական հայերը, հազարաւոր վերստեր անցնելով, հասնում են Լենդօն և ջերմ ընդունելութիւն գտնում բոլոր շրջաններում, սկսած Հօվարդենի դղեակից, ուր Գլադստօն ընդունում էր անտուն ու անտէր ժողովրդի բեկորներին յուսատու խօսքերով, իսկ Պետերբուրգում՝ գաղթական, փախստական հայը ապաստան չէր գտնում նոյնիսկ „գիշերային ապաստարանում“։ Պարիզում հրաւէրները յաջորդում էին հրաւէրներին, կրքեր էին լոյս տեսնում, փողեր էին հաւաքւում յօգուտ որբ և քաղցած հայերի, իսկ Թիֆլիսում չէին թոյլ տալիս նոյն իսկ յիշատակել այդ մասին։ Շվեյցարիայում կոմիտէներ էին կազմւում յանուն հայերի. Դանիայում ինքը թագուհին անցնում էր հանգանակութեան գործի գլուխը. հեռաւոր Ամերիկայում, մինչև անգամ Գերմանիայում, միսիոնարական ընկերութիւններ էին կազմւում օգնելու մի ամբողջ ժողովրդի խեղճ մնացորդներին, իսկ Ռուսաստանում, այն Ռուսաստանում, որ 1878 թուին Սան-Ստեփանոյի դաշնագիրը ստեղծեց, անխիղճ ոստիկանութիւնը փորձում էր յետ քշել այն անթիւ դժբախտներին, որոնք հազիւ իրենց կեանքը ազատել էին Կովկասի սահմանը անցնելով...

Մի տեղ ողորմութիւն, միւս տեղ թշնամութիւն. մի տեղ օգնութիւն, միւս տեղ հալածանք. մի տեղ բողոք, սպառնալիք թիւրքերի դէմ, միւս տեղ լռելեայն հաւանութիւն Արդիւլ Համիդի ծրագրերին...

Հայը կարո՞ղ է ժոռանալ այդ։

Պատմում են, որ Կարինի կոտորածների ժամանակ, երբ նոյն իսկ մահմէդական պարսից հիւպատոսը՝ արտասուքը աչքերին՝ ապաստան էր տալիս փախչող հայերին, ռուսաց հիւպատոսը փակում էր անպաշտպան կանանց և երեխաների առաջ հիւպատոսարանի դռները, թոյլ չէր տալիս, որ անմեղ երեխաները և յուսահատ կանայք ապաստան գտնեն քրիստոնեայ կայսրութեան դրօշակի տակ։ Եւ այդ նոյն հիւպատոսարանն էր, որ տարիներ առաջ ճանաչուած էր իբրև հայերի պաշտպանութեան գլխաւոր օջախը, իբրև հալածական հայերի առաջին ապաստան...

Ներելի՞ է միթէ։

Պետերբուրգի տեղեակ շրջաններում այն կարծիքն են յայտնում, որ Նիկոլայ կայսրը երկար ժամանակ ոչինչ չգիտէր հայկական կոտորածների մասին։ Երբ 1896 թ-ին կայսրը անցնում էր Վիէննայով, աւստրիական ծերունի կայսր Ֆրանց Յովսէփ չկարողացաւ թաղցնել իր անձնական վիշտը հայկական չտեսնուած չարչարանքների պատճառով։ Երիտասարդ կայսրը չթաղցրեց և իր զարմանքը։ Մի քանի ժամից յետոյ կայսրը յիրաւի համոզուեց, որ ինքը շատ քիչ տեղեկութիւն ունի այն բոլորի մասին, ինչ որ կատարուել էր Հայաստանում 1895 և 1896 թուականներին։ Գլխաւոր թաղցնողը, ինչպէս յայտնուեց, եղել էր արտաքին գործերի մինիստր Լոբա-

նով-Ռոստովսկին, որի մասին այն կարծիքը կայ դիւանագիտական շրջաններում, թէ նա ուղղել էր մի գրութիւն թիւրքաց կառավարութեան, ասելով թէ „Պէտք է կանգնեցնել հայոց շարժումը, ինչ միջոցով և լինի“։ Եւ, աւելացնում են, հէնց այդ գրութիւնն է, որ առանձին համարձակութիւն էր տուել Մեծ Մարդասպանին աներկիւղ իրագործել իր սոսկալի ծրագիրը։

Պատմում են, որ տեղեկանալով իրողութեանը, Նիկոլայ կայսրը յայտնել էր խորին դժգոհութիւն Լորանով-Ռոստովսկուն, և երբ մի քանի օր յետոյ Վիէննայից վերադառնալիս, կայսերական գնացքի վագոնում Լորանով յանկարծամահ եղաւ, շատերը ասում էին. „Նա չդիմացաւ կայսեր խիստ յանդիմանութեան“...

Որքան ճիշդ է այդ կարծիքը, չգիտեմ. այսքանը միայն կ'աւելացնեմ, որ Պօլսի ֆրանսիական դեսպան Կամբոն, լսելով Լորանով-Ռոստովսկու յանկարծական մահը, բացականչել է. „Լորանով խեղդուեց հայոց արեան մէջ“...

Թոյլ տուէք աւելացնել էլի մի փաստ, քանի որ խօսք եղաւ Նիկոլայ կայսրի մասին։ Պարիզից՝ իմ մի ծանօթը երկու ամիս առաջ հաղորդեց ինձ նամակով հետևեալը։ Լօնդօնի „Times“ լրագրի Պարիզի թղթակիցը, իր թղթակցութիւններից մէկի մէջ հաղորդում է, թէ Նիկոլայ կայսրը, լսելով հայկական կոտորածների մասին, նիրել է յօգուտ հայերի 250 հազար ֆրանկ (մօտ 100 հազար ռուբլի), բայց երկու տարուց յետոյ, այն է 1898 թուին՝ կայսրին տեղեկացրին, որ իր նիրած այդ գումարից և ոչ մի կոպէկ չէ հասցրուած նպատակին։ — Տարաբախտաբար, ես ձեռքի տակ չունեմ Լօնդօնի լրագրի այդ համարը՝ լուրի մանրամասնութիւնները քաղելու համար, բայց այսքանն էլ բաւական է նկատելու համար, թէ ինչ սոսկալի տրամադրութիւն է տիրում Պետերբուրգի յայտնի „ղեկավարող շրջաններում“ դէպի հայոց հարցը, որ թոյլ է տալիս մինչև իսկ, կայսրի նուէրը „անհետանք թողնել“...

Բայց հիրիք է, ընթերցող. կարենք այդ տխուր պատմութեան թելը։ Միայն թոյլ տուէք ինձ այս համառօտ տեսութիւնից յետոյ հարցնել. „Արդեօք հայկական այժմեան տրամադրութիւնների մէջ մեղաւորը անգլիական ինտրիգներ՞ն են, որոնց մասին ես խօսեցի անցեալ նամակում, թէ՞ այն անխոհեմ, անմիտ և հալածասէր քաղաքականութիւնը, որ ծաղկելով ծաղկում է ժամանակակից Ռուսաստանում, շնորհիւ մեր „տնասուն քաղաքագէտների“։

Զէ՛։ Բարեխիղճ լինենք և առանց խորութիւն գնելու հայի, ռուսի, լեհի և ֆինների մէջ, խոստովանենք, որ այդ հալածասէր քաղաքականութիւնն է, որ պետութեան սահմանագլուխներում „հարցեր“ ստեղծեց և բարդութիւններ առաջ բերեց։ Այդ „քաղաքականութեան“ շնորհիւ է, որ հայերի նախկին բարեկամութիւնը՝ երէկ արդէն դարձել էր սառնութիւն, այսօր նա արդէն դառնում է ատելութիւն, իսկ վաղը կարող է փոխուել թշնամութեան։ Իսկ դրա տխուր, անցանկալի և վնասակար հետևանքը...

Այդ գուշակելու համար կարիք չկայ Դաւիթ մարգարէի խելքը ունենալ. դրա համար բաւական է և մի ստատսկի սովետնիկի խելքը...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

„Դրօշակ“-ի խմբագրութիւնը, ամսիս 11-ին ուղարկեց „Մոսկովսկիեա Վեդոմոստի“ թերթի և մի քանի ուրիշ ռուս լրագրերի խմբագրութիւններին, տպելու համար, հետևեալ հերքումը.

„Մոսկովսկիեա Վեդոմոստի“ լրագրի № 133-ում տպուած էր „Հայկական ցնորքները և Ֆինլանդիան“ վերնագրով և X. ստորագրութեամբ մի յօդուած, որի մէջ, իմիջի այլոց, հեղինակն ասում է հետևեալը.

„Դրօշակ լրագիրը ուղղակի յայտնում է, թէ «մեր (հայոց) նպատակները բոլորովին նոյնն են, ինչ որ ձեր (ֆինլանդացիների) նպատակները, և ձեր դրութեան բարւոքումը մենք համարում ենք բարւոքումն և մեր դրութեան։ Մենք ու դուք մի ընդհանուր թշնամի ունենք — Ռուսաստանը և մենք ու դուք մի ընդհանուր ինդիր ունենք վճռելու — ոչնչացնել (sic) այդ թշնամուն»։

Դրօշակի խմբագրութիւնը հարկաւոր է համարում յայտնել, որ այդ ամբողջ, չակերտների մէջ գրուած, հատուածը յօդուածագիրը հնարել է իր գլխից։ — Դրօշակում չկան ոչ միայն պր. X.-ի բերած դարձուածքները, այլ և ոչ մի նախադասութիւն նրանց նման, և ընդհանրապէս ոչ մի կոչ ուղղուած ֆինլանդացիներին։

Ինչ վերաբերում է յօդուածագրի կողմից մեզ վերագրուած ցանկութեան՝ ոչնչացնել Ռուսաստանը, իբրև հայերին թշնամի տերութիւն, թերևս հետաքրքրական լինի ձեզ համար իմանալ, որ մինչև վերջին ժամանակներս Դրօշակը շատ քիչ էր զբաղւում ռուսահայերի դրութեամբ և որ միայն այս տարուայ յունուար ամսից են սկսել տպուել նրա մէջ „Կովկասեան խարիկներ“ վերնագրով նամակները, որոնց առաջինը մեր աշխատակիցը վերջացնում է հետևեալ խօսքերով.

«Բայց դա չի նշանակի, թէ այս տողերի գրողը ներչնչուած է թշնամութեամբ դէպի Ռուսաստանը։ Ընդհակառակը։ Ես ռուս ժողովրդի անկեղծ բարեկամն եմ և շատերի հետ չեմ ուրանում այն փաստը՝ որ Կովկասը Ռուսաստանի շնորհիւ յարկից ազատուեցաւ, կան քաղաքակրթութեան։ Բայց այդ խոստովանելը՝ չի նշանակում լռել և թաղցնել բռնութեան և անարդարութեան սոսկալի փաստերը, որոնք ոչ միայն ճնշում են փոքրիկ ազգերը, այլև սրատաւորելով Ռուսաստանի համբաւը, ջլատում են նրա ներքին զարգացումը»։

Աւելորդ ենք համարում կանգ առնել պր. X.-ի յօդուածի մնացեալ մասերի վրայ, որովհետև նրանց մէջ չի տրուած Դրօշակի անունը. այնքանը կ'ասենք միայն, որ այդ մասերում էլ յօդուածագիրը առանց քաշելու չակերտների մէջ է գնում իր հնարած նախադասութի ենները։ Սակայն *ab uno disce omnes.*

* * *

Ֆրանսիայում՝ վաղուց նկատւում է հասարակական կարծիքի մի զօրեղ հոսանք, որ դատապարտում է ֆրանսիական դիւանագիտութեան բռնած դիրքը վերջին տա-

բիների հայկական դէպքերի վերաբերմամբ։ Այդ հոսանքի գլխաւոր ներկայացուցիչները պատկանում են արմատական և ընկերվարական կուսակցութիւններին, որոնք սկսել են վերջերս մեծ կշիռ ստանալ Ֆրանսիայի ղեկավարող շրջանների մէջ։ Սակայն այդ կուսակցութիւններից դուրս էլ այդ հայասիրական շարժումը գտնում է զօրեղ պաշտպաններ։ Անհրաժեշտ ենք համարում այդ տեսակէտից շեշտել մանաւանդ այն փոփոխութիւնը, որ նկատւում է Le Temps-ի պէս անուղղելի օպպորտիւնիստ թերթի մէջ, որ ներկայացնում է ֆրանսիական գործիչների չափաւոր և մինչև այժմ գերիշխող տարրերը։

Ֆրանսիայի կողմից Լա Հէյի դեսպանաժողովը ուղարկած պատգամաւորներից մէկը՝ գ՝Էստուրնէլ դը Կոնստան գրում է, իմիջի այլոց, այդ թերթում.

«Այն իրր ինքնամիտիման և ձեռնպահութեան քաղաքականութիւնը, որին հետևեցինք Եգիպտոսի և Հայաստանի վերաբերմամբ, որքան էլ յարմար լինի ներկայի համար, վտանգում է մեր ապագան և արդէն ցոյց է տուել իր դառն պտուղները»։

* * *

Հակակղերական, բայց օպպորտիւնիստ Գամբէտտան ասել է մի ժամանակ, թէ „հակակղերականութիւնը արտահանելու ապրանք չէ“։ Մինչև այժմ էլ այդ սկզբունքով է ղեկավարւում Ֆրանսիան, որ կարծում է թէ կաթոլիկ կղերը ամենալաւ միջոցն է ֆրանսական ազդեցութիւնը Արևելքում տարածելու համար։ Դժուար է աւելի անհեթեթ կարծիք ունենալ իրականութեան մասին, գոնէ որքան հարցը վերաբերում է հայերին, և վերին աստիճան ուրախալի է տեսնել, որ իրենք ֆրանսիացիք սկսում են նկատել մեծ Գամբէտտայի մեծ սխալը։ Այդ առթիւ մենք թոյլ ենք տալիս մեզ բերել այստեղ մի հատուած Aurore-ում տպած մի յօդուածից, որ պատկանում է հայութեան բարեկամ Իւրբէն Գոհիէի գրչին.

«Յայտնի է, թէ ինչպէս են օգտուում կաթոլիկ կրօնականները Ֆրանսիայի հովանաւորութիւնից։ Նրանք հաստատած հայերին գնում են այնպիսի դրութեան մէջ, որ նրանք ստիպուած են լինում ընտրել մահ կամ հաւատափոխութիւն։ Ֆրանսիայի արեղաների վանքերը ապաստան են տալիս այն հայերին, որոնք համաձայնում են թողնել իրենց գաւանութիւնը և մտնել կաթոլիկ եկեղեցու ծոցը։ Միւսներին նրանք թողնում են Արքիել Համիդի մարդասպանների կամքին։ Այս տեսակ գարշելի վարմունքով Հռոմի գործակալները տակութիւն և արհամարհանք են սփռում դէպի Ֆրանսիան մեր հին հովանաւորեալների մէջ»։

* * *

Ինչպէս յայտնի է, սուլթանի պահանջով դատի են ենթարկուած Պարիզում Aurore թերթի երեք հայասէր աշխատակիցները՝ Իւրբէն Գոհիէ, Պիէռ Քիյար և Շ. Մալատ։ Դրանցից մէկը, պ. Քիյար տպել է հետևեալ բաց նամակը ուղղուած սուլթանին։

„Նամակ Մեծ Մարդասպանին“

Ընկեր Արքիել Համիդ

Դու բարեհաճել ես հրաման արձակել, որ մեզ դատի ենթարկեն քո Էլչիպէի Paris-en-Paris։-ի պատճառով։

Այն երախտագիտութիւնը, որ մենք պարտական ենք քեզ, այդպիսով մեզ միջոց տալու համար լիովին հրապարակելու այն մարդասպանութիւնները և կոտորածները, որոնց համար դու արժանացել ես արդէն Կարմիր-Գազան անուան, չի կարող մեզ ստիպել լռելու քո այժմեան չարագործութիւնների մասին։

Դու յայտնում ես ափսոսալիս քո դեսպանի բերանով, թէ քո աներորդի Մահմուդ փաշան խելագար է, թէ նա փախցրել է իր ինքնաշարժ աղաներին, և թէ վերջապէս նա խստութիւնամբ փող է կորզել մի անգլիական ընկերութիւնից, ցոյց տալով իբր թէ ինքը մեծ վարկ ունի քո առաջ։

Բոլորն էլ սուտ, ընկեր Համիդ։ Մահմուդ փաշան խելագար չէ, այլ պարզապէս ազատամիտ։ Նրա տարած անչափահասները երկուսն էլ ամուսնացած են և ընտանիքի հայր, իսկ ինչ վերաբերում է քո մօտ ունեցած վարկ ունենալով պարծենալուն, նա այդ չէր կարող անել. — դու չատ լաւ գիտես, որ նա միակն էր քո աներորդիների մէջ, որ տարիս կէսից իսկ չէր համաձայնում գալ սէրմիքներին, և որ նրա այդ արիասիրտ բացակայութիւնը բաւական սրտով վիրաւորում էր, թէ նա ուզում է ցոյց տալ քեզ իր արհամարհանքը։

Մի ուրիշ բան եւս Մահմուդ փաշան առաջինը չէ, որ փախչում է քեզնից։ Քո զոհերից մի ուրիշն էլ է եկել Պարիզ, տիկին Զէքիէ-Հանումը, որի ամուսինը Իսմայիլ բէյ եօթ ամիս առաջ բանտ է ձգուել, որովհետև երեւան է հանել մարէշալ Զէքի փաշայի կաշառակերութիւնը։ Երբ ֆրանսիական գեսպանատան թարգմանը միջամտեց և արդարութիւն պահանջեց, դու պատասխանեցիր, «Չեմ սիրում Իսմայիլ բէյին»։ Պատահաբար այդ անգամ դու ճիշտ խօսեցիր։ դու գերադասում ես Զէքի փաշային, վարձկան մարդասպանին, որ երբեմն աւերեց Սասունը և Գէյէ-Դիզանում քշեց դէպի Նրանց դիակների համար պատրաստած փոսը երկու հարիւր անզէն հայերի, որոնց դրաւել էր խոստումներով, և հրամայեց զինուորներին կոտորել Նրանց սրերով ու սուիններով։

Դարձեալ մի ուրիշ բան։ Դիւրացիք Մէրանամակնգանական տարերում ապրում են։ Մի գուցէ ուզում ես ուղարկել Նրանց դէմ ինչպէս 1879 թ-ին մի ամբողջ զօրամասակ, Ջնջել Նրանց կամ կոտորել Նրանց պետերին, ինչպէս արել էր այն ժամանակ Դէրվիշ փաշան։ Ժամանակը ամենևին յարմար չէ այդպիսի գործերի համար. քանիցդ վատ են, բարեկամ միւսելման հպատակներիդ համար էլ դու նոյնքան անտանելի, նոյնքան զզուելի ես դարձել, որքան քրիստոնեայ հպատակներիդ համար։

Վերջապէս, յուրախութիւն քո, Վանում էլ շատ ուրիշ անգամներում սովոր՝ աւելի խիստ քան անցեալ տարի, վերջացնում է քո աւերման գործը։ Ես կը խոսեմ դրա մասին մի ուրիշ անգամ եւ դու զուր սպասած չես լինի. — կարող ես բոլորովին վստահ լինել ինձ վրայ, որովհետև ես միշտ աշխատում եմ լինել բարեխիղճ պատմագիր քո Արքունաշաղախ Անասնութեան։

ՊԻԷՌ ՔԻՅԱՌ

Ցաւանք, որ յարգելի հրապարակախօսը ստիպուած չի լինի հիասթափուել այդ „ազատամիտ“ թիւրքի վերաբերմամբ, ինչպէս շատերը հիասթափուել են շատ ուրիշ „ազատամիտ“ թիւրքերի վերաբերմամբ։

* * *

Պարիզի լրագիրներում տպուած է La Ligue des droits de l'homme կոչուող հզօր կազմակերպութեան կողմից հետևեալը։

«Մարդկային իրաւունքների պաշտպանութեան դաշնակցութեան կեդրոնական կոմիտէն, յուզած Հայաստանից վերջերս հասած ծանր լուրերից, յանկարծ է յայտնում, որ հասարակապետութեան կառավարութիւնը վճռել արդելել այն կատարածների վերջնորոշ

գումր, որոնք 1896 թ. ին ցարդեցին մի անպաչտպան փողոցում եւ վչաով լցրին ամբողջ մարդկութեան սիրտը»։

* * *

Aurore-ում տպեցին մի շարք համակրական և քաջալերական նամակներ ու հեռագիրներ, ուղղած այդ լրագրի խմբագրութեանը այն դատի առթիւ, որ սկսել է նրա դէմ անամօթութիւնը իր համար արհեստ շինած Արդիւլ Համիդը։

Ահա այն նամակի թարգմանութիւնը, որ ուղարկեց „Դրօշակ"ի խմբագրութիւնը այդ հայասէր թերթի տնօրէն պ. Վօգանին։

Պարոն տնօրէն,

Հայ յեղափոխական «Դրօշակ» թերթի խմբագրութիւնը պատիւ ունի յայտնել ձեզ իր իրին հաստատութիւնը եւ շնորհակալիքը այն սրտի կուսի համար, որ դուք ցոյց էք տուել անչափաւորի կերպով. յանուն արդարութեան ու ճշմարտութեան, ընդդէմ բարբարոսութեան եւ լրութեան մի դիւանագի փապիշահի, որ կատարել ուզեց հազարաւոր անմեղներ եւ որի ճակատին մարդկութեան խիղճը խարանել է Մեծ Մարդասպան անունը։

Աւելի է քաղաքակրթութեան եւ Ֆրանսիայի համար ազատութիւն տալ այդ մարդկութիւնից նշանակուած վնասակարն դատի ենթարկել ձեզ յանուն արդարութեան, որի անունը անգամ թող չի տալիս ինքը, այդ անարդ վնասակարը, արտասանել իր նզովեալ սէրութեան մէջ։

Իսկապէս իրեն սուլթանին, այդ՝ Սատանա պատուհասին, պէտք է ենթարկել դատի իր անթիւ եղեռնագործութիւնների համար, եւ ոչ թէ այն մարդկանց, որոնք լի հրաչալի եւ ազնիւ զգացմունքով արձագանք են դարձել ճնշած ու հալածուած ազգերի։

ԹԵՐԹՕՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

(ՆԻԷՐ ԸՐԱՄ ԸՐԱՄԵԱՆԻ ՑՈՇԱՏԱԿՈՒ)

I

ԲԱՆՏԱՊԵՏԸ

Կէս-գիշեր էր։ Բանտում ճնշող լռութիւն էր տիրում. միայն պահապանի համաչափ քայլերի ձայնն էր լսւում միակերպ, անընդհատ։ Զնդանների դռների վրայ բացուած փոքրիկ կլոր ծակերը սեին էին տալիս նախասենեակի կիսախաւարի մէջ. պահապանը դաւակիրի հայեացքով մերթ ընդ մերթ աչք էր ձգում նրանց վրայ, որոնք կարծես մահու աչքեր լինէին իր վրայ ուղղուած։

Լոյս կար միայն բանտապետի սենեակում։ Այնտեղ երկու մարդ նստած էին սեղանի հանդէպ և նայում էին առաջները փռուած մի թերթ թղթին։ Բանտապետն էր այն և իր օգնականը. նրանք մատիտով նշանակում էին թղթի վրայ այն բանտարկեալների անունները, որոնք վաղը դատարանին պիտի ներկայանային։

Զրրը՛նգ, զրրը՛նգ, զրրը՛նգ...

— Ո՛հ, դարձեա՛լ, բացականչեց բանտապետը, մատիտը ձեռքից վայր ձգելով։

— Ի՞նչ է այդ, հարցրեց ընկերը։

— Մի նոր բանտարկեալ, որ իր շղթաների ձանձրալի զրրընգոցով ահա մի քանի օր է, որ իմ հոգին հանում է։

— Ինչո՞ւ է այդպէս աղմուկ անում։

— Ես գիտե՞մ՝ ինչու. անպատճառ շարժւում է իր շանրնում, աշխատում է շրջել „մուոտաա գեավուրը" և ինձ հանգիստ չի տալիս։ Սատանան տանի այս պաշտօնը,—և նա բուռունցքով պինդ խփեց սեղանին. այրքան տարի այստեղ եմ և այդ դժոխային ձայնին չսովորեցի։

Զրրը՛նգ, զրրը՛նգ, զրրը՛նգ...

Կրկին լսւեց նողկալի շրինդը, այս անգամ աւելի բարձր, աւելի որոշ։

Չե՞մ կարող, որոտաց բանտապետը. չեմ կարող ոչինչ անել, երբ լսւում է այդ ձայնը։ Երեկ կիշեր աչք չեմ խփել այդ անիծած զրրընգոցից։

Օգնականը սկսեց ծիծաղել։

— Ինչո՞ւ ես ծիծաղում։

— Ինչո՞ւ եմ ծիծաղում. եփած հաւն էլ կը ծիծաղի, եթէ նրան ասեն, որ գայլը գողում է ոչխարի բառաչից։ Տօ՛, բարկանալ ու անհանգիստ լինելը ո՞րն է, լռեցրո՛ւ, էլի։

— Լռեցնե՞մ, հեշտ է ասել, բայց ի՞նչպէս լռեցնեմ։

— Հրամայի, որ քնի։

— Բայց եթէ չի՞ քնում։

— Փնացրո՛ւ. միջոց չկա՞. ապա սրանք ինչու՞ համար են.— օգնականը ձեռքը մեկնեց դէպի պատից կախած հաստ չուանները՝ երկաթեայ գունդը ծայրերին։

Օգնականը նոր էր ստացել իր պաշտօնը. ոճիր գործելու յանցաւոր եռանդը փայլում էր նրա վագրային աչքերում։ Երևի՝ ոճիրի թարմութիւնն էլ գրաւիչ է։

Զրրը՛նգ, զրրը՛նգ, զրրը՛նգ... կրկին լսւեց ժանգոտ երկաթի սարսեցուցիչ շռինդը։ Բանտապետն այս անգամ մի փոքր մտածեց, շրթունքները կծոտեց և զայրոյթով դուրս գնաց։ Նա դիմեց դէպի այն վնդանի դուռը, որտեղից լսւում էր ձայնը։ Բաց արեց դռան վրայի փոքրիկ անցքը և կանչեց որոտալով.

— Է՛յ, շո՛ւն գեավուր, ինչո՞ւ հանգիստ չես մնում։

— Բայց ես ոչինչ չեմ անում, լսւեց ներսից։

— Ինչո՞ւ ես զրրընգոց հանում անպատճառ։

— Այդ ձեր տուած շղթաներն են շառաչում։

— Ինչո՞ւ ես շարժւում, որ ձայն հանեն։

— Ապա ի՞նչ անեմ։

— Քնի՛ր. քնի՛ր ասում եմ, թէ չէ...

Բանտարկեալը լուռ էր։

Քնի՛ր, հեշտ է ասել,— մտածում էր բանտարկեալը. բայց կարո՞ղ է քնել ազատութեան փատաբախտ զինուորը, որ կենդանի թաղուած է մոլի գերեզմանի մէջ և համոզուած չէ, թէ իր ստրուկ հայրենիքի բոլոր ցաւերը, դարաւոր վէրքերը, արցունքն ու հեծեծանքները իր հետ միասին յաւիտեան թաղում է նոյն գերեզմանի մէջ։

Հայդուկի կուրծքը հրարուխ էր, գլուխը՝ մտքերի ծով. բանտը՝ նեղ, շղթաները՝ ծանր, միայն նրանց շռինդն էր — ահագին բոնութեան յաղթանակի զարհուրելի երգը, որ աշխարհի սկզբից հնչում է քարաշէն, մութ կամարների տակ, ուր ազատութիւնը գտաւում է ու մոնչում տիեզերական անմահ ոգուն յանձնելով պատմել իր փրկարար խոհերն աշխարհին։

Ա՛յսպէս էր բանտարկեալը և նա չէր քնում։

Բանտապետը հեռացաւ, իսկ բանտարկեալը մի փոքր

կանգ առաւ, մտածեց և ապա կրկին շարժուեց։ Բանը նեղ էր. շրջել չէր լինում. նա աշխատում էր պատերի տակից փոքրիկ, շատ փոքրիկ պտոյտներ կաղմել... Եւ շղթաները շառաչում էին, և խաւարն աղմկում էր, զրրը՛նգ, զրրը՛նգ, զրրը՛նգ...

— Վաղո՞ւց է բերուած այդ անպիտանը, հարցրեց օգնականը, երբ բանտապետը կրկին ներս մտաւ։

— Երեք օր առաջ որսացին Թոփրախգալէից։ Զարերիցն է, քնել չի կարողանում. կարծեմ, տակը շատ բան կայ, միայն ոչ ոք չի ճանաչում, ո՞վ է, ո՞րտեղից է։

— Ուրեմն կը բարձրանայ։

— Կախաղա՞ն. իհարկէ, եթէ հաստատուի։ Բայց ի՞նչ տղամարդ է։

— Այդպիսիներ՞ն են գնացել...

Նրանք լռեցին. խօսել չէր լինում. նիւթը յարմար չէր. ոճիրների մասին շատ չի խօսւում. երևի սեփական ձայնը զզուելի է այդ ժամին. այլ են մտքերը։

Այդ լռութիւնը կրկին ընդհատուեց շղթայի նոր շառաչիւնով։

— Սպասի՛ր մինչև լոյս, գեավո՛ւր, մռմռաց բանտապետը, սպասի՛ր...

Օգնականը վեր կացաւ, բարի գիշեր ասաց, դուրս գնաց։ Բանտում կրկին լռութիւն տիրեց, որ սակայն դեռ երկար ժամանակ մերթ ընդ մերթ ընդհատւում էր շղթաների զարհուրելի շռինդով.—զրրը՛նգ, զրրը՛նգ, զրրը՛նգ։

Լուսացաւ։ Բանտարկեալներին նախաճաշ տալու ժամն էր։

— Հիմայ դու յաւիտեան կը քնես, գեավո՛ւր, մրմռում էր բանտապետը, մի ման կերակուր ձեռքին ուղղելով դէպի անհանգիստ բանտարկեալի խուցը։

Դուռը բացեց, ներս մտաւ, կեղտոտ հեղուկը դրեց գետին։

Բանտարկեալը քնած էր տակաւին, ուստի նա ըզգուշութեամբ դուրս եկաւ, կրկին դուռը փակեց. բայց չհեռացաւ դռնից, կամ՝ աւելի ճիշդ՝ չկարողացաւ հեռանալ։ Մի անորոշ, բայց հզօր զգացմունք նրան մխեց իր տեղում։ Նա աչքը դրեց դռան փոքրիկ ծակին և անթարթ նայում էր ներսը առանց կարողանալու յետ քաշուել։ Բանտարկեալի կերպարանքը սքանչելի էր ու վեհ։ Բաց, լայն ճակատ, պայծառ ու շքեղ, ինչպէս իր տակ ծածկուած մտքերը. ջլուտ դէմք, եղերուած թաւ, լայն միրուքով, փուած առնական կրծքին, որ վեհութեամբ բարձր ու ցածր էր լինում։ Ամբողջ պատկերն իր մէջ մի բան ունէր, որի առաջ բանտապետն իրեն ընկճուած էր զգում, կրօնական երկիւղի պէս մի բան էր զարթնում նրա սրտում։ Նա աշխատում էր յետ մղել իրենից նոր զգացմունքը, որ դեռ երբեք նրա մէջ չէր ծագել սրանից առաջ։ Ոչ, ոչ, նա նրան չի խղճում։ Ահա նա կամացուկ կը վերկենայ, կը մօտենայ կերակրին, մէկ, երկու գդալ և թոյնն իր գործը կը տեսնի. թող այնուհետև չքնի. թող չքնի, եթէ կարող է։ Այսպէս էր մտածում բանտապետը, նայելով քնած երիտասարդին։ Բայց ինչո՞ւ էր մնացել կանգնած, ինչո՞ւ չէր հեռանում գնում, այդ ինքն էլ չգիտէր և աշխատում էր այդ մասին չմտածել, նոյնիսկ աշխատում էր ինքն իրեն հաւատացնել, որ մնացել է հրճուելու զոհի մահուան տեսարանով, նրա գալարումներով, նրա հառաչանքով։

Նա խաբում էր իրեն։

Ահա բանտարկեալը շարժուեց, աչքերը տրորեց, նստեց, շուրջը նայեց։ Զարմանալի՛ բան. բանտապետը սկսեց դողալ. նրա ծնկները ծալւում էին. ուրեմն ոճիրի առաջ հրճուելու քաջութիւնը սո՞ւտ էր. բայց չէ՞ որ նա շատերին է թունաւորել։ Բանտարկեալը վերկացաւ, շղթաները հանեցին իրենց վաղեմի շռինդը, բայց բանտապետն էլ չզայրացաւ, նա սոսկում էր. ինչո՞ւ. այսօր առաջին անգամն էր նա իր ձեռքով թունաւորում մէկին. նախորդներն միայն իր հրամանով էին կատարւում։

Ահա բանտարկեալը մօտեցաւ կերակրի ամանին. բանտապետը տեսաւ այդ էլ. ոտներն երերացին, նա յենուեց դռանը չ'ընկնելու համար։ Ահա գոհը ձեռք առաւ գդալը ամենայն խաղաղութեամբ, կարծես մի շատ սովորական գործ էր կատարում։ Բանտապետն այժմ դժուարանում էր նայել. նա ուզեց յետ քաշուել, չկարողացաւ. նրա կոկորդը սկսեց չորանալ... Ի՞նչ էր արել նրան, բանտապետին, այդ հոյակապ տղամարդը։ Այդ չքնաղ պատկերը, այդ հրաշալի, բոցոտ աչքերը, այդ ամբողջ երիտասարդ կեանքը՝ ինչո՞վ էր արժանի այդ մեծ ոճիրին։ Ինչո՞ւ էր ուզում նա վերջ տալ այդ կեանքին և այն՝ ամենազզուելի եղանակով, թոյնով...

Բանտարկեալը չէր կարող դուշակել բանտապետի մէջ կատարուող այդ ներքին կռիւը և նրա պատճառը. նա գդալը կերակրի մէջ կոխեց, պատրաստւում էր բերանը տանել, երբ երկաթէ դուռը դղրդոցով բացուեց և բանտապետը ներս վազելով բռնեց նրա ձեռքը՝ գոչելով.

— Կա՛ց... կա՛ց...

Նրա դէմքը սարսափելի էր։ Բանտարկեալը զարմացած նայում էր այդ մարդուն։

— Կա՛ց, ճչաց կրկին բանտապետը.—նա հևում էր, նա խեղդւում էր շնչակտուր.—չեմ կարող, կա՛ց, շարժիր այդ շղթաներդ ոչքան կ'ուզես, թող նրանք շառաչեն յաւիտեան, բայց այդ մի՛ կեր, ես էլ չեմ կարող։—Եւ նա խլեց ամանն ու գդալը, շտապով դուրս փախաւ և դուռը փակեց։

Բանտարկեալը հասկացաւ. նրա դէմքին մեղմ ժպիտ փայլեց՝ որպէս վերջալոյսի տխուր շողք. նա հրճուում էր.—քարէ կամարի տակ, երկաթէ դռան յետևում, ժանգոտ շղթաների մէջ՝ նա յաղթանակում էր...

II

„ԸՆԿԵՐԸ"

Անցան օրեր և շաբաթներ։ Յերեկ էր։ Զրրը՛նգ՝ զրրը՛նգ, զրրը՛նգ. նոյն շղթաների շռինդն էր, որ այս անգամ հնչում էր Ա. քաղաքի փողոցներում։ Փայլփլուն սուիններով արանքից մերթ ընդ մերթ երևում էր մի գունատ դէմք. նոյն բանտարկեալն էր, որ տարւում էր դատարան։

Զրրը՛նգ, զրրը՛նգ... Օրը ցերեկով էլ այս շռինդը սոսկալի է. դռներ կան, որոնք զգուշութեամբ փակւում են, լուսամուտներ, որոնք շտապով ծածկւում են. մի ամբողջ երկրի բողոքն է, որ հառաչելով անցնում է փողոցներով և մարդիկ ծածկւում են սարսափով։

Ահա դատարանը. շա՞տ են... դատաւոր, քննիչ, դրագիր։ Այստեղ են նաև բանտապետն ու իր օգնականը։

„Ես չարի. ես անպարտ եմ, դուք գիտեք“, մռմռում էր բանտապետն ինքն իրեն...

Դատաւորը դիմում է մեղադրեալին.

— Դո՞ւ ես Ա...ևցի Ա...

— Ո՛չ, ես Ա...ևցի չեմ։

— Ք...ը քո ընկե՞րն է։

— Ես նրան չեմ ճանաչում։

— Գ...ին դո՞ւ ես սպանել

— Այո՛, նա իմ թշնամին էր։

— Զէնքերը դո՞ւ փոխադրեցիր Շ...

— Ո՛չ, ես չեմ փոխադրել

Բանտապետի օգնականը, որ մինչև այդ շեշտակի նայում էր մեղադրեալին, այժմ մօտեցաւ դատաւորին, մի բան փսփսաց նրա ականջին, ապա նրա գլխի նշանի վրայ մօտեցաւ, կանգնեց մեղադրեալի առաջ, մստ, մստ, բոլորովին մօտ։

Դատարանում լռութիւն տիրեց. ամէնքը սպասում էին ինչ որ անսովոր և նոյնիսկ զարհուրելի բանի և հայեացքներն ուղղել էին այդ երկու մարդին, որ դէմ առ դէմ կանգնած նայում էին իրար՝ ինչպէս շատ տարիների քէնով լցած թշնամիներ։ Երկու դէմքեր չէին նրանք, այլ չորս աչքեր միայն, կամ՝ աւելի ճիշդ՝ չորս բոցեր, որոնք աշխատում էին դուրս ցայտել խոռոչներից և այրել հակառակորդներին։

Հանդիսատեսները սկսեցին սարսուռի պէս մի բան զգալ. ինչ որ պիտի կատարուէր, շատ էր անսովոր, շատ էր ահաւոր։

Հակառակորդները շարունակում էին նայել իրար... Նրանց չռած աչքերը չէին թարթում, իրար վրայ սղմուած շրթունքները չէին շարժւում, յօնքերը չէին խաղում, ձայն չէր լսւում, խօսք չէր արտասանւում, Նրանք միայն հեւում էին և նայում, նայում էին և հեւում, մէկը շղթաների մէջ. բայց հպարտ ու սրբազան զայրոյթով բռնուած, միւսը տաճիկ պաշտօնեայի համազգեստով և գործելիք ոճիրի հանդէպ շփոթուած, դողդողուն։ Այստեղ էր կատարւում իսկական Դ ա տ ա ս տ ա ն ը, նա, որ շիկացած երկաթով խարան է դնում խիղճերի վրայ։

Յանկարծ բանտարկեալը յետ քաշեց, շղթաները հնչեցնելով, և այնպէս զզւանքով դարձրեց երեսը իր հակառակորդից, որ վերջինը ցուրտ զգաց թիկունքում, երերաց և հազիւ կարողացաւ թոթովել.

— Ե՛ս... Ե՛ս... քեզ ճանաչում եմ, դու Ա...ն ես։

— Այո՛... մռնչաց մեղադրեալը... դու իմ „ընկերն“ ես եղել...

„Ընկե՛ր“... սարսափելի էր. այդ բառը մարմին առաւ և հրեշաւոր այլանդակութեամբ ցցւեց օգնականի առաջ. նա այժմ տեսնում էր իրեն զզւելի մանրամասնութեամբ, տեսնում էր և վախենում իր պատկերից։ Ոլքա՞ն արիւն ծախեց իր փայլուն կոճակների համար։ Նա ակամայ ձեռքը դրեց մի կոճակի վրայ, սառն էր. յետ քաշեց։ Քանի՞ տարի շարունակ նա գաղափարի ընկեր էր ձևացել այս շղթայակապ հերոսի հետ. քանի՞սին խարել օձի նենգութեամբ, իսկ այժմ... Նա շշափեց իր սուրը, կրկին յետ քաշեց ձեռքը, և ակամայ նայեց իր նախկին ընկերոջ ծանր շղթաներին։ Ո՞րն էր լաւ՝ տաճիկ պաշտօնեայի սո՞ւրը, թէ՞ հայրենիքի փրկութեան նահատակի ժանգոտ շղթաները... Այս հարցը, որ նա վաղուց վճռած էր համարում, այսօր կրկին ցցւեց նրա առաջ, ինչո՞ւ... Ո՞վ կարող է չափել մարդկային սրտի խաւար խորութիւնը, ուր շատ անգամ ոճիրների կողքին քնած են հազար ու մի առեղծուածներ...

Դարձեալ դիշեր, մի մռայլ գիշեր։ Սև երկնքի տակ անհանգիստ քամին էր աղմկում խաւարի ծանր լռութիւնը։

Օգնականը դէպի բանտն էր գնում, բանտապետը կանչել էր։ Նրա քայլածը նախորդ օրերի աշխոյժը չունէր, խաւարն էլ լաւ չէր, քամին էլ լաւ չէր, դրսում ոչինչ լաւ չէր։ Նա մտածում էր այնպիսի բաներ, որ կը գերադասէր չմտածել։ Այս առաւօտ, ինչքա՞ն աշխատեց թագնուել, երբ Ա... բարձրանում էր կախաղան. չ՛եղաւ։ Նա կարծես յատկապէս իրեն էր փնտրում, գտաւ և նայեց, էլի այնպէս, ինչպէս դատարանում, զզւանքով. կարծես նա ուզեց մահից առաջ իր ճակտին յաւիտեան դրոշմել այն սոսկալի, թունաւոր հայեացքը, որից իր արիւնը սառում էր։ Ահա խաւարի մէջ երկու փայլուն կէտեր,—երկու աչքեր են. նա կանգ առաւ, մտքերի թելը կտրուեց, այժմ յիշեց աչքերը. ճիշդ այդպէս են, մեծ, լայն, նա վախենում էր. ի՞նչպէս առաջ գնալ... մի փոքր մտածեց. աչքերը փակեց. երբ բացեց, փայլուն կէտերն այնտեղ էին, այժմ աւելի մեծ, աւելի պսպղուն... Ճարը կտրած նա վրայ վազեց. աչքերն անյայտացան. մի կատու էր, որ փախաւ։ Նա ժպտաց իր վախկոտութեան վրայ, բայց և այնպէս շուտ շուտ գնաց։

Ահա նա բանտի բակումն է. վերջապէ՛ս. նայեց դէպի այն կողմը, ուր այս առաւօտ կախաղանն էր, նա համոզուած էր, որ դիակը թաղուած, ամեն ինչ վերջացած կը լինէր. բայց... նա սառած մնաց,—դիակը դեռ սպիտակին էր տալիս խաւարի մէջ. և ամեն անգամ, երբ քամին ուժով խփում էր, կախաղանի սիւները ճռճռում էին ծանր, ողբաձայն, ինչպէս սիրելիի վրայ ողբացող սգաւորներ, կամ ծանր ցաւից հեծող թշւառներ։ Եւ քամին տանում էր այդ ճռինչը աշխարհին յանձնելու համար։

Ճանապարհն անցնում էր հէնց կախաղանի տակով. նա վազեց առանց վեր նայելու, բայց քանի մօտենում էր կախաղանին, այնքան քայլերը ծանրանում էին. քամին չի թողնում, մտածեց նա։ Ստիպուած եղաւ ծանր գնալ, առանց կարողանալու աչքերը հեռացնել կախաղանից. ծանօթ սարսուռը կրկին անցաւ նրա մարմնով։ Վերջապէս դողալով նա մտաւ բանտապետի մօտ։ Այստեղ լաւ էր. գոնէ կենդանի մարդ կար։ Բանտապետը վերև չնայեց, նա մտախոհ էր։ Լուռ էին։

— Հրմայ խամ հանգիստ ես, ասաց օգնականը ճլնշող լռութիւնն ընդհատելու համար. էլ ձայն չկար։

— Կա՛յ. չե՞ս լսում, այ ականջ դիր։—Դրսից քամու մռմռոցի հետ միասին լսւում էր սիւների ճռճռոցը՝ սխո՛ւր, միակերպ, ինչպէս մի հսկայական օրօր յաւիտեան քնող նահատակի վրայ։

— Ինչո՞ւ թաղել չտւիր։

— Հէնց դրա համար եմ կանչել քեզ, վաղը նրան դո՛ւ պիտի թաղել տաս, դու նրա ընկերն ես եղել...

Օգնականը լուռ էր։ Ակնարկը սպանիչ էր։ Դարձեալ...

— Ես չթունաւորեցի նրան... մռմռում էր բանտապետը, նա ուզում էր շարունակել, բայց յանկարծ լռեց։ Զլինի՞ թէ արտասւում է մտածեց օգնականը և

սարսափեց... Բանտապետը գլուխը քաշ էր ձգել. աչքերը սուերումն էին։ Ահա նա կամացուկ տեղից բարձրացաւ, վերցրեց լամպը և դողդողալով մօտեցրեց բանտապետի դէմքին։ Բանտապետը գլուխը բարձրացրեց, զայրոյթով խլեց օգնականի ձեռքից լամպը, զարկեց յատակին և փշուր փշուր դարձրեց գոչելով.

— Դաւաճան, ընկե՛ր էր...

Սենեակում խաւար տիրեց, ամէն մի անկիւնում տասնեակ փայլուն աչքեր պլպլացին. ապա մեծացա՜ն, մեծացան... սարսափելի՜ էր, պէտք էր դուրս փախչել, օգնականը դուռը չէր գտնում. քանի անգամ նա պտոյտ գործեց, վերջապէս ուժասպառ, քրտնաթոր հազիւ գտաւ դուռը և գլուխը զգուշութեամբ դուրս հանեց։

Դուրսն էլի սարսափելի էր, խաւար, քամի, և կախաղանը շարունակում էր ողբալ իր միակերպ ճռճռոցով և դիակը ճօճւում էր օդի մէջ։ Ո՞ր գնալ... Նա վճռեց կրկին վազել և անցնել, բայց հազիւ մի քանի քայլ արած. նա աչքերը վեր բարձրացրեց. — առջևում, խաւարի մէջ երկու աչքեր փայլում էին, արիւնոտ, ճաթռուած. նրա ծնկները ծալուեցին... Դողդողալով եկաւ դէպ՝ բանտապետի դուռը. „Դաւաճա՜ն“... կրկին մռմռաց բանտապետը. ամբողջ աշխարհն էր խօսում այդ մի հատիկ բերանով։ Օգնականը յետ դարձաւ և այս անգամ վազեց թափով. քամին նրան չթողեց առաջ գնալ. նա կանգ առաւ հէնց կախաղանի տակ։ Քրտինքը թափւում էր վրայից. բայց նա դողում էր, ատամները իրար էին զարկւում։ Ապա նայեց վերև, դիակն այս անգամ էլ այնպէս բարկացած չէր, աչքերը նայում և թարթում էին մեղմ, կարեկից և արիւնոտ. շրթունքները կամացուկ մրմնջում էին „ընկե՛ր, ընկե՛ր, ընկե՛ր“... Այս բառի տեղ նա կ՝ուզէր լսել իր գլխին ճայթող մահացու կայծակի որոտը. ո՞ւր փախչել ազատելու համար։ Ոտները իրեն չէին հնազանդւում, նա յենուեց կախաղանի սեանը և սարսափած նայում էր ճօճւող դիակին երկա՜ր, երկա՜ր, և լսում էր կախաղանի ողբաձայն ճռոցը։

Նա յիշեց բոլորը... իր գլխի վերև օրօրուող դիակն իր „ընկերն“ էր... ո՞ւր էր ինքը և ո՞ւր իջաւ։ Կ՝ուզէր արտասուել, բայց չկար այդ զովացուցիչ արցունքը, մինչդեռ կուրծքն ուռած էր, այրւում էր, և նա աւելի և աւելի մօտ էր սեղմւում օրօրուող սեանը, տրորում էր կուրծքը՝ ներսի բոցը մարելու համար... Իզուր։

Երկար նա գալարւում էր վիրաւոր օձի պէս խաւարի և միայնութեան մէջ. յանկարծ նա թողեց սիւնը, բռնեց կլոխը, կանգ առաւ մի փոքր, ապա տենդոտ շարժումներով մօտեցաւ, վերցրեց սանդուխքը, դրեց. բարձրացաւ, պարանն արձակեց. դիակը վայր ընկաւ և նա արագութեամբ նոյն պարանն իր պարանոցը ձգեց, ճօճւեց օդի մէջ. քամու ձայնին խառնուեց մի քանի խոխոջ... և ամէն ինչ վերջացաւ։

Եւ նայում էին իրար այդ երկու դիակները չոած աչքերով մէկը վերևից, միւսը ներքևից, և լսում էր խաւարի մէջ բանտապետի հեծկլտանքը...

Եւ ազատութեան ոգին անցնում էր այդ դիակների վրայով, մէկին ժպիտով, միւսին խոժոռ նայելով...

ՂԱՐԻԲ

ՆԻՐԱՏՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ստացած է՝

Ս. քաղաքէն՝ Պ. 250 Փր. — Փրոյբէրոդէն՝ „Մասիս“ խումբ 25 մարկ. — Պիրգօսէն՝ Մ.-ծ 5 դրախմ. Համբուրգէն՝ Պ. Խ. 50 Փր. Տիւբինգէնէն՝ Ճ. 6 Փր. — Բ. քաղաքէն՝ Պ. Ց. 50 ռուբլի. — Ժընէվէն՝ Ա. 30 Փր., Կարմիրէն 10 Փր. — Ցիւրիխէն՝ Ժ. 6 Փր. — Զիկագոյէն՝ Գ. Պողոսեան 2 դոլար. — Մ.-թին 10 դոլար. Քոստանցայէն՝ „Դեւեան“ խումբ՝ Գէորգ Սոսեփանեան 10 Փրանք, Գլխիկոր 5, Շ. Հ., Կ. Ատուածատուր 2-ական օր. Ձ. Թ. 1։ (Գումար 20 Փր.)։

ՈՍԿԵՀԱՆՔԻ Կոմիտէն՝

Արշաւիր խմբէն՝ Ապաղամբ 60 դահեկան, Ոսկի, Ծաղիկ, Նորայր 6. 25-ական, Ծահայ 5, Գերեզման խումբ, Փայլակ, Շահէն 5. 25-ական, Արիւն խումբ 8. 25, Վեց-հարուածեան 20, Արարատ (10 մէջիտ) 200. ԱՐՇԱԿԱՒԻՆԷՆ՝ Անմնազոն խումբ 23. 50, Երկիւղած խ. 16. 50, Ազգասէր խ. 10, Կիրակոս 20, Վեց-հարուածեան 20, Թուր 6. 25, Սուր, Փայլակ 5. 25-ական, Արսլանեան խումբ 20. 50։ Գումար 455 դահեկան։

ՆԱԻԱՀԱՆԳՍՑԻ Կոմիտէն՝

ԺՄԱԿ գիւղից. — Պ. Մ., Ս. Մ. 10-ական ռուբլի, Ց. Կ. 5, Խ. Շ., Ց. Թ., Հաճի 3-ական, Փեշլիկ, Խ. Կ., Գ. Մ., Կալայճի, Ս. Կալայճի, Կ. Ա. մէկմէկ ռուբլի, Ց. Ա. 70 կոպէկ, Ա. Կ., Օվել. Մ. Ա., Մ. Կ. 50-ական կոպ., Ց. Ք. 35, Կարապէտ 20, Յակոբ 15, Շապար 5։ Գումար 43 ռուբլի 45 կոպէկ։

ՔԷՊԶԷ ՓՈՒՂԱՐԷՆ. — Ց. Մ. 2 ռուբլի, Նագիճի 1, — Ց. Ք., Նանսոլի, Կոնող, Ց. Կ. 50-ական կոպէկ, Կասըմ 40, Կէնոեան, Հիրամ, Կոլճի, Լոպիան 20-ական։ Մայիս, յունիս եւ յուլիս ամսավճարներից 18 ռուբլի։ Նիկոլից սեպտեմբերի ամսավճար 1։ Գումար 25 ռուբլի 20 կոպէկ։

ՄԱՅՐ ՔԱՂԱՔԷՆ 1898 հաշուէն՝ Ապահ 700 ռուբլի, Ամիրխան 400, Արայ 200։ Գումար 1300 ռուբլի։

ՏԱՊԱՐ Կեդր. Կոմիտէն՝

Նարեկացի (օգոստ. եւ սեպտ.) 80 դահեկան, Հրաչ (օգոստ. եւ սեպտ.) 80, Արեւ, Սուրբ Զատիկ 108-ական, Հրաչ (հոկտ. նոյեմբ.) 80 դահեկան, Նարեկացի (հոկտ. նոյեմբ.) 80, Հրաչ-Նարեկ 20, Պերճ՝ 5 ամսական (յուլիսէն նոյեմբ.) 50, Զրվէժ շրջ. 20, Շփոթ շրջ. 5։ Գումարը 631 դահեկան։

ԱՊԱՌԱԺԻ Կոմիտէն՝

Յունվար եւ յուլիս (1899 թ.) ամիսներուն, իմիջի այլոց, հետեւեալ նուէրները. — „Ոյժ“ 150 ռուբլի, „Նեցուկ“ 50, „Նպատակ“ 48. 68, Օրիորդ 35, Մարիամ 15, Նինօ, Մոսի, Թա...., Պա...., 10-ական, Ռիմի 5. 5, Խ., Գ. Խ., Թ., Գ. Տ., Պատաւ 5-ական, Ն. Ց., Ջ., 3-ական, Գալիլիա, Գայիանէ 1. 20-ական, Վարդիթեր, Աննա 0. 80-ական։ Գումար 378 ռուբլի 73 կոպէկ։

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ Կոմիտէն՝

Խումբէ մը 300 ռուբլի, Տ. Մ., Դ., Տ. Գ., Բ., Ք., Ս., 100-ական, Տ. 50, Ս., Խ., Ար., Կ., Մ. 25-ական, Մ. 15, Մ. 10։ Գումար 1,100 ռուբլի։

ԲԱԼԿԱՆԵԱՆ Կեդր. Կոմիտէն՝

ՀՈՎԻՏ կոմիտէէն՝ 73 լեւ 40 սանթիմ։ — Ք. քաղաքի Տուժիկ անկախ խ. 21 (միւտրի հատար) եւ 16. 80 հոկտեմբերի ամսավճար, Տօպրիչի Սլսք անկախ խ. 10։ Գումար 121 լեւ 20 սանթիմ։

ՄԱԿԵԴՈՆ կոմիտէն „Արեւելեան“ երկու խումբերէն՝ 47. 55, „Արեւելեան“ի վիճակահանութիւն 20, Բաբկէն Սիւնի խ. 30, Նաբէ խ. Թեր-հաշիւ, Հ. Փափազ 100-ական, Մ. Ադամ 60, Պէտտիկին Զազը 20, Աղմիտէ, Զօրք 5-ական։ Գումար 387, լեւ 55 սանթիմ։

ՎՐԻՊԱԿ. — „Դրօշակի“ 6-րդ հատարի մէջ տպագրուած Բալկանեան Կեդր. Կոմիտէի նուիրատուութեան ցանկին մէջ ուղղելի է հետեւեալ տպագրական սխալը. ԱՄՐՈՑ քաղաքի Կոմիտէն ունենալով 287 լեւ 80 սանթիմ մուտք. առէջ Կեդր. Կոմիտէին փոխադրեր է 127 լեւ 55 սանթիմ։ Ուրեմն այս վերջինը սխալմամբ կրկներ է Կեդրոնականի մուտքին մէջ։

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)